Azg
27 ՄԱՐՏ 1998 ՈՒՐԲԱԹ # 54 (1557)

Ռոբերտ Քոչարյանը եւ Կարեն Դեմիրճյանը ելույթ կունենան Ազատության հրապարակում

Շաբաթ օրը՝ մարտի 28-ին, ժամը 18-ին Ազատության հրապարակում Ազգային համաձայնության թեկնածու Ռոբերտ Քոչարյանին սատարող ժողովրդավարական կազմակերպությունները հավիրում են հանրահավաք, որտեղ ելույթ կունենա նաեւ Ռոբերտ Քոչարյանը, տեղեկացնում է թեկնածուի նախընտրական շտաբի ԶԼՄ-ների հետ աշխատանքի բաժինը:

Հանրահավաքին կհաջորդի ջահերով երթը, որը կխորհրդանշի լույսի՝ ժողովրդավարության պայքարն ընդդեմ խավարի, ամբողջատիրության:

Միջոցառումից հետո մասնակիցները կապահովվեն փոխադրամիջոցներով:

Մարտի 27-ին, ժամը 12-ին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի դահլիճում կկայանա ՀՀ վարչապետ, ՀՀ նախագահի թեկնածու Ռոբերտ Քոչարյանի մամլո ասուլիսը:

Արմենպրեսի հաղորդագրությամբ՝ մարտի 28-ին, ժամը 14-ին Երեւանի Ազատության հրապարակում նաեւ կկազմակերպվի հանրահավաք նախագահի թեկնածու Կարեն Դեմիրճյանի մասնակցությամբ:

ԱՍՈՒԼԻՍ

Մեկ ժամ, որ վերջինը չի լինելու

Ռոբերտ Քոչարյանի հանդիպումը լրագրողների հետ

ՈՍՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մարտի 26-ին կառավարության շենքում վարչապետ Ռոբերտ Քոչարյանը հանդիպեց «Հայաստանի Հանրապետություն», «Ռեսպուբլիկա Արմենիա», «Ազգ», «Առավոտ» օրաթերթերի, «Նոյյան տապան» լրատվական գործակալության եւ «Ազատություն» ռադիոկայանի լրագրողների հետ: Ինչպես միշտ, վարչապետը բարեհամբույր էր, ընդգծված կիրթ ու հավասարակշռված, խոսում էր ցածրաձայն, մեր ամեն տեսակ, այդ թվում խիստ անհաճո հարցերը լսում էր ուշադիր եւ համբերատար, առանց ներքին դժգոհության նշույլի: Հանդիպումն անցավ անկաշկանդ մթնոլորտում: Իմ տպավորությամբ որն Քոչարյանն անկեղծ էր իր պատասխաններում, «դերասանություն» չկար, ընդհանրապես դա հատուկ չէ իրեն:

Հանդիպումը սկսվեց գործընկերներից մեկի կատակով «որն վարչապետ, մեզնից չե՞ք հոգնել»: Ի պատասխան հավաստիացում ստացանք. «Լրագրողներից ոչ: Միգուցե ասեիք՝ ընտրարավի՞գ»: Հետո ավելացրեց, թե շուտ հոգնողներից չէ, բայց նախընտրական հանդիպումների ընթացքում շատ հարցեր կրկնվում են եւ դրանց անվերջ պատասխանելը «արդեն ծանծրալի է»: Ինչպես հասկացա, ինքն էլ ուրախ կլիներ, որ այս ամենն արդեն ետեւում մնացած լիներ: Ի դեպ, հանդիպման ընթացքում իմ հարցերից մեկը հենց այդպիսին էր՝ «Նախագահ ընտրվելու դեպքում շարունակելո՞ւ է հանդիպել լրագրողներին եւ պահպանելո՞ւ է նույն բարյացակամությունը մեր նկատմամբ, թե՞ նախկին նախագահի օրինակով 5 տարին մեկ ենք իրեն տեսնելու»: Որն Քոչարյանը պատասխանեց այն ոգով, որ անցած մեկ տարում ինքը մամուլից չի անջրպետվել եւ գտնում է, թե «մեր երկիրն այն վիճակում է, որ դա շատ հեշտ է, մեզնից չե՞ք հոգնել»: Ի պատասխան հավաստիացում ստացանք. «Լրագրողներից ոչ: Միգուցե ասեիք՝ ընտրարավի՞գ»: Հետո ավելացրեց, թե շուտ հոգնողներից չէ, բայց նախընտրական հանդիպումների ընթացքում շատ հարցեր կրկնվում են եւ դրանց անվերջ պատասխանելը «արդեն ծանծրալի է»: Ինչպես հասկացա, ինքն էլ ուրախ կլիներ, որ այս ամենն արդեն ետեւում մնացած լիներ: Ի դեպ, հանդիպման ընթացքում իմ հարցերից մեկը հենց այդպիսին էր՝ «Նախագահ ընտրվելու դեպքում շարունակելո՞ւ է հանդիպել լրագրողներին եւ պահպանելո՞ւ է նույն բարյացակամությունը մեր նկատմամբ, թե՞ նախկին նախագահի օրինակով 5 տարին մեկ ենք իրեն տեսնելու»: Որն Քոչարյանը պատասխանեց այն ոգով, որ անցած մեկ տարում ինքը ժամանակ չի անջրպետվել եւ գտնում է, թե «մեր երկիրն այն վիճակում է, որ դա շատ հեշտ է հասկանալի: Միգուցե ասեիք՝ ընտրարավի՞գ»: Հետո ավելացրեց, թե շուտ հոգնողներից չէ, բայց նախընտրական հանդիպումների ընթացքում շատ հարցեր կրկնվում են եւ դրանց անվերջ պատասխանելը «արդեն ծանծրալի է»: Ինչպես հասկացա, ինքն էլ ուրախ կլիներ, որ այս ամենն արդեն ետեւում մնացած լիներ: Ի դեպ, հանդիպման ընթացքում իմ հարցերից մեկը հենց այդպիսին էր՝ «Նախագահ ընտրվելու դեպքում շարունակելո՞ւ է հանդիպել լրագրողներին եւ պահպանելո՞ւ է նույն բարյացակամությունը մեր նկատմամբ, թե՞ նախկին նախագահի օրինակով 5 տարին մեկ ենք իրեն տեսնելու»: Որն Քոչարյանը պատասխանեց այն ոգով, որ անցած մեկ տարում ինքը ժամանակ չի անջրպետվել եւ գտնում է, թե «մեր երկիրն այն վիճակում է, որ դա հասկանալի է

ԱԶԳ

ՊՍԹԱԳԻԿ

ԱՍՈՒԼՍ

Կոմկուսը ոչ մի թեկնածուի չի պաշտպանում, բայց չի բոյկոտում ընտրությունները

«Հայ դաշտ», «Ազգային վերածնունդ» եւ «Հայկանդուխտ» ինքնորոշվեցին Քոչարյանի օգտին

Համարելով, որ նախագահի բոլոր, այդ թվում երկրորդ փուլ անցած թեկնածուների ծրագրերը «տանում են դեպի վայրի շուկայական հարաբերությունների խորացում» եւ, չնայած «երկրի խարխլված տնտեսությունը ծանր ճգնաժամից դուրս բերելու» թեկնածուների ծրագրերում առկա առանձին մոտեցումներին, չեն երաշխավորում կոմկուսի նախընտրական ծրագրի առանցքային հարցերի լուծումը, երեկ տեղի ունեցած կոմկուսի պլենումը, հավասարիմ «ժողովրդին անմնացորդ ծառայելու իր առաքելությանը», «մաքրված լինելով նոմենկլատուրային ճահճից», միաձայն որոշել է նախագահի ընտրությունների երկրորդ փուլում թեկնածուներից եւ ոչ մեկին չպաշտպանել:

Այդ մասին լրագրողներին տեղեկացնելով փակ պլենումին անմիջապես հաջորդած ասուլիսի ընթացքում, կոմկուսի առաջին քարտուղար Սերգեյ Բաղալյանն, ընդհանուր առմամբ ինքնադատելով ընտրությունների առաջին փուլում «գործի դրված ընտրակաշառքը, կեղծիքը, կոպիտ ճնշումն ու բռնարարքները», ընտրությունների ընթացքի համապարփակ վերլուծությունը վերապահեց 34-րդ արահերթ համագումարի առաջիկայում հրավիրվելիք նիստին: Քանի որ ընտրությունների երկրորդ փուլի նկատմամբ դիրքորոշման արտահայտումը կոմկուսից փորձեց (բայց չկարողացավ) խլել «Հայկանդուխտ» ավանդապահ-ժողովրդավարական կուսակցության նախագահ Արմենուհի Ղազարյանը, Սերգեյ Բաղալյանին ուղղված առաջին հարցը «Ժողովրդահայրենասիրական ուժերի միության» հնարավոր պառակտման մասին էր: Կոմկուսի առաջին քարտուղարը, սակայն, բնական համարեց միության մեջ ընդգրկված կազմակերպությունների ազատ ինքնորոշումը՝ փիլիսոփայաբար մոտենալով խնդրո առարկային. «Վետերանների միությունը նույնպես պաշտպանել է Ռոբերտ Քոչարյանին: Մենք որեւէ կազմակերպության վրա ճնշում չենք գործադրել ու չենք համարում, թե պառակտվել ենք»:

Կարեւորելով պահը, եւ ավելորդ առճակատման նախադրյալներ չստեղծելով, կոմկուսն անթույլատրելի է համարում ընտրությունների բոյկոտումը եւ, կոչ չանելով քվեարկել թեկնածուներից որեւէ մեկի օգտին, ընտրությունը թողնում է սեփական ընտրազանգվածին: Կանխագուշակումներից խուսափելով, Ս. Բաղալյանը նշեց, որ ընտրողների մի մասը կթեքվի Քոչարյանի, մյուս մասը Ղեմիրճյանի կողմը, սակայն հիմնական զանգվածը կնախընտրի «երրորդ օղակը» (չի քվեարկի կամ կքվեարկի երկուսի դեմ): Նրա կարծիքով, թեկնածուների մի մասը, հասարակական կարծիքի ազդեցության տակ անցնելով թեկնածուներից մեկի կողմը, անտեսել են համախմբման գաղափարական հիմքերը: Ըստ Բաղալյանի, Կարեն Ղեմիրճյանն, օգտագործելով ժողովրդական վերելքը, ընտրողների միամտությունը եւ հիշողության պակասը, տիրացել է իր քվեների 25 տոկոսին, ուստի իր քվեներին իրականում պետք է ավելացնել Ղեմիրճյանի ձայների 25 տոկոսը:

Ընտրություններից հետո կոմկուսի առաջնորդը մի քանի անգամ հանդիպել է թեկնածուներին Ղեմիրճյանի հետ բարոյահոգեբանական գույցների, Քոչարյանի հետ ծրագրային ինքնակումների ծանոթակով: Շփման ընդհանուր եզրեր առկա են երկուսի հետ, բանակցությունները կշարունակվեն նաեւ ընտրություններից հետո, սակայն կոմկուսի դիրքորոշումը երկրորդ փուլի վերաբերյալ անբեկանելի է. Հանդիպումների ընթացքում պորտֆելների վերաբերյալ խոսքումներ կամ առաջարկներ չեն եղել («Ոչ ես, ոչ թեկնածուներն այդ մակարդակին չենք իջել, խոսակցությունները կոնստրուկտիվ են եղել»). կոմկուսը երբեք իշխանատենչությամբ չի տառապել: Ընտրություններից հետո ձեւավորվելիք կառավարությունը, Ս. Բաղալյանի կարծիքով, երկար կյանք չի ունենա, քանզի նոր, հասարակության մեջ ուժերի իրական հարաբերակցությունն արտահայտող խորհրդարանի ընտրությունն անխուսափելի է:

Համաեղ հայտարարությունն ստորագրած թեկնածուների մյուս օրվա «դավաճանությունը», առավել եւս թեկնածուներից մեկի մասնակցությունն ընտրությունների երկրորդ փուլին անսկզբունքայնության դրսեւորում համարելով, Բաղալյանը նշեց. «Ցավոք սրտի, կոպտագույն խախտումներ եղել են մի քանի թեկնածուների թիմերի կողմից»: Մերժելի համարվեց մեզ ժողովրդավարություն սովորեցնող արեւմտյան ինստիտուտների միջամտությունը Հայաստանի ներքին գործերին. «Ինքներս պիտի տեր կանգնենք մեր ճակատագրին, մեր ընտրությունների միջոցով», ասաց կոմկուսի առաջին քարտուղարը: Բաղալյանը վրդովմունքով մերժեց այն կասկածը, թե համագումարի հրավիրվելիք նիստը քննարկելու է իր հրաժարականի խնդիրը, հիշեցնելով իր կարերը ոուս գործընկերների հետ:

Սերգեյ Բաղալյանն անձամբ մասնակցելու է ընտրություններին «իբրեւ մտավորական, իբրեւ քաղաքացի, որ պարտավոր է ունենալ սեփական կարծիքը եւ հայտնել համապատասխան ձեւով», սակայն, պահպանելով գաղտնիության սկզբունքը, չհրապարակեց, թե ում օգտին է քվեարկելու երկրորդ փուլում (կոմկուսի առաջին քարտուղարի համակրանքը, թվում է, այնուամենայնիվ, Ռոբերտ Քոչարյանի կողմն է):

Ավելացնենք, որ «Ժողովրդահայրենասիրական ուժերի միության» երեք անդամ-կազմակերպություններ «Հայ դաշտ», «Ազգային վերածնունդ» եւ «Հայկանդուխտ», տարանջատվելով կոմկուսից, համապատասխան հայտարարությամբ անվերապահորեն պաշտպանում են Ռոբերտ Քոչարյանի թեկնածությունը, քանզի համարում են, որ «դավաճաններին չի կարելի ներել»: Հայաստանի գլխավոր մտահոգությունն Արցախն է, իրենք հավատում են նաեւ սոցիալական արդարության, Ռուսաստանի հետ հարաբերությունների վերաբերյալ վարչապետի խոսքումներին: Միության մեկ այլ կազմակերպություն «Երիտասարդ կոմունիստներ», պաշտպանում է կոմկուսի դիրքորոշումը:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՆԴՐԱԳԱՐԾ

Հայաստանում չկան մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտ նախադրյալներ

Ինչպես տեղեկացրել էինք, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների ժնեւյան գրասենյակի ազգությունների պալատում մարտի 2-20-ը ընթացավ ռասայական խտրականությունների հարցերով զբաղվող կոմիտեի 52-րդ նստաշրջանը, որին մասնակցում էր Հայաստանի պատվիրակությունը: Պատվիրակության ղեկավար, ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության տնօրեն Ա. Մելիք-Շահնազարյանը երեկ ՄԱԿ-ի Հայաստանի գրասենյակի հասարակական տեղեկատվության բաժնում հանդիպեց Հայաստանի ազգային փոքրամասնությունների համայնքների, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների եւ մամուլի ներկայացուցիչներին:

Նա հանգամանորեն ծանոթացրեց հայկական կողմի պատրաստած զեկույցին: Այն բնավ նպատակ չուներ իրավիճակը սփոփել պայծառ գույներով, որը եւ գնահատվեց միջազգային փորձագետների կողմից: Մենք դեռեւս ի վիճակի չենք կատարելապես ապահովել մարդկային իրավունքները, որովհետեւ, չնայած հազարամյակների մեր մշակութային հիմքին, այսօր առկա տնտեսական եւ սոցիալական ծանր պայմանները թույլ չեն տալիս լուծել այդ խնդիրները: Մեզ մոտ ամբողջովին անհնար է հենց մարդու կյանքի իրավունքի պահպանությունը, մասնավորապես սահմանամերձ շրջաններում:

Որեւէ պայմանագրի ստորագրումը դեռ չի նշանակում գործն ավարտված համարել: Այդ չափանիշները պիտի ներառել մեր տեղական օրենքների, ինչպես եւ մարդկանց մտածելակերպի մեջ: Օտարերկրացիներին, իհարկե, մեր մասին տեղեկությունները հետաքրքրում են միայն մակերեսային առումով, հաճախ՝ ընդամենը ի գիտություն: Այդ պատճառով տեղեկատվական հոսքում նրանք նախընտրում են սենսացիոնը, գլխավորապես՝ բացասական երանգով: Այս հարցում պրն Մելիք-Շահնազարյանը մեղադրեց բաժինը վերագրեց լրագրողներին, որոնք միջազգային հասարակությանն ի լուր տարփողում են այդ մասին (թեկուզ այս ընտրությունների շրջանում ԵԱՀԿ հայտարարությունները, որ մեծ բան չեն, բայց ռեզոնանսը հսկայական է): Մինչդեռ մեր երկրում բազմապատիկ ավելի գոյություն ունի լավը:

Ա. Գ.

Քարոզարշավ Լոռիում եւ Դիլիջանում

Իսկ ոչխարը մորթեցին Տաշիրում

Ալավերդու քաղաքային մարզադաշտում նախագահի թեկնածու Ռ. Քոչարյանի հրավիրած հանրահավաքը ջերմ ընդունելության արժանացավ հազարավոր մասնակիցների կողմից: Քոչարյանին ներկայացրին Վ. Հովհաննիսյանը, Պ. Հայրիկյանը, Ա. Բազեյանը եւ ուրիշներ: Ելույթ ունեցավ նաեւ Ռոբերտ Քոչարյանը՝ ներկայացնելով սոցիալ-տնտեսական տարբեր բնագավառներում ընտրվելու դեպքում նախատեսված բարեփոխումները: Նույն օրը Ալավերդու կենտրոնական հրապարակում հանրահավաք էր կազմակերպել նախագահի մյուս թեկնածու Կարեն Դեմիրճյանը: Այնուհետեւ նա ընտրողների հետ հանդիպեց Դիլիջանում, Մարգահովտում, Ստեփանավանում, Տաշիրում եւ Մեծավանում: Վերջին 3 հանդիպումները զգալի ուշացումով սկսվեցին, որոնց պատճառը չնախատեսված հանրահավաքն էր Մարգահովտում: Այս անգամ եւս ավանդույթը չխախտվեց: Տաշիրցիները ոչխար մորթեցին Կարեն Դեմիրճյանի համար:

Մ. ՄԿՐՏՉՅԱՆ

Բոտուլիզմը սրում է մագիլները

Մարտի 23-ին Նորքի մանկական ինֆեկցիոն հիվանդանոց են բերվել բոտուլիզմով հիվանդացած մի աղջնակի եւ իր մորը: Այս տարվա հունվարից ի վեր միայն այս հիվանդանոց են բերվել բոտուլիզմով վարակված 7-8 հիվանդ, որոնցից մեկը մահացել է: Ըստ հիվանդանոցի գլխավոր բժիշկ Արայիկ Ասոյանի, նախորդ օրը ընդունված հիվանդները նույնպես մահամերձ վիճակում են: Պրն Ասոյանը կարծում է, որ կտրականապես պետք է բացառել տնային պայմաններում պատրաստած պահածոների օգտագործումը: Մեր առարկությանը, որ ձեռնարկություններում պատրաստվող պահածոները, չնայած անթերի ջերմամշակմանը եւ ըստ այդմ՝ մանրէազերծմանը, իրենց պատրաստման հաճախ հակահիգիենիկ ընթացքով պարզապես վստահություն չեն ներշնչում, նա պատասխանեց՝ պետք է խուսափել պահածոներ գործածելուց:

Ներկայումս մեր հանրապետությունում տիրող սոցիալական ծանր իրավիճակը մեծ մասին հնարավորություն չի տալիս ընտրել թարմ սնունդ, այն էլ ձմռան ամիսներին: Բացի այդ, ձմեռային պաշար ունենալը մեզ չափազանց բնորոշ ավանդույթ է, եւ դժվար է հրաժարվել պահածոներ պատրաստելու սովորույթից, որոնք միաժամանակ բազմազան են դարձնում մեր սեղանը: Սակայն երբեմն այդ անելիս չպիտի խնայել ջուրն ու էլեկտրաէներգիան: Հակառակ դեպքում դարանակալ վտանգը յուրաքանչյուր պահի կարող է գլուխ բարձրացնել:

Հիմա ձմեռային սեզոնի վերջն է, պետք է շատ ուշադիր լինել, եւ անկախ կասկածներ ունենալուց՝ կանխավ ջերմամշակման ենթարկել յուրաքանչյուր պահածո: Պրն Ասոյանը պնդում է, որ ոչ իր, ոչ իր մերձավորների ընտանիքները պահածոներ չեն փակում:

Ա. Գ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակություն է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրենություն / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Յուրաքանչյուր «Ազգի» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

10 ավիաընկերությունների չվերթերի աշխարհագրությունը

Մամուլում պարբերաբար հնչող բարձրաձայն կասկածները օդային փոխադրամիջոցների (այն է՝ խորհրդային արտադրության օդանավերի) անվտանգության մասին ավելի ու ավելի լսելի են դառնում: Որպես հիմնական օդային փոխադրող ճանաչում ունի «Հայկական ավիաուղիներ» ՊՓԲԸ, որը շահագործում է ռուսական արտադրության օդանավեր, որոնց անունն այլեւս չի դիտարկվում որպես ավիացիայի նվաճում, բայց այդ օդանավերի աղտահովության կամ անաղտահովության մասին եզրակացությունները թողնենք փորձագետներին: Հայաստանում գրանցված են 10 պետական եւ ոչ պետական, գործող եւ չգործող ավիաընկերություններ, որոնցից երեքը ունեն պետականի կարգավիճակ («Հայկական ավիաուղիներ» ՊՓԲԸ, «Արարատ Ավիա» ՊՓԲԸ, «Գյումրու ավիաուղիներ» ՊԴՁ):

Քաղաքացիական ավիացիայի կողմից (3.08.1993 թ. հրաման 258 համաձայն) տրված են շահագործման վկայականներ եւս յոթ սեփական ավիաընկերությունների «Երեւան Ավիա» ԲԸ, «Դվին Ավիա» ՓԲԸ, «Ավիա Ուղարտու» ՍՊԸ, «Արմավիա» Ա/Ը ՍՊԸ, «ԱՍ-Աերո» ՓԲԸ, «Էար Վինգզ» ՓԲԸ, «Սիփան» Ա/Ը ՓԲԸ: Սեփական ավիաընկերությունները չպետք է կատարեն պետական շուկայի չվերթերը: Իրենց թռիչքների աշխարհագրությամբ չպետք է կրկնեն արդեն իսկ որեւէ պետական ավիաընկերության կողմից կատարվող չվերթերը: Չնայած ասվածի հստակությանը, «Դվին-Ավիա» ՓԲԸ իրականացնում է «Երեւան-Դուբայ-Երեւան» բեռնատար չվերթը АН-12 տիպի ինքնաթիռով շաբաթական 2 անգամ, որը նախկինում նույնական հաջողությամբ իրականացնում էր «Հայկական ավիաուղիներ» ՊՓԲԸ: Սա այն չվերթերի թվին է պատկանում, որ ինչպես ժողովրդական առածն է ասում ավել պատառը մարդու փոր չի ծակի:

Մնացած ավիաընկերությունները, եթե չեն կարողացել պետական շուկայից ձեռք բերել եկամտաբեր չվերթ, ոմանք զործը թողել են որպես թղթավարություն, ոմանք էլ ձեռք են բերել ոչ ավել, ոչ պակաս մեկ ինքնաթիռային ռեսուրսների շահագործման ժամկետները երկարացված օդանավ: Իսկ թե ո՞րն է լինելու նրանց թռիչքների աշխարհագրությունը, դեռեւս իրենց էլ պարզ չէ:

Ես դեմ չեմ, որ սեփական ավիաընկերությունները իրենց չվերթերով ուղղակի օդային կապ ստեղծեն աշխարհի տարբեր երկրների հետ: Մտահոգությունն այն է, արդյո՞ք չեն տուժում նրանց արդյունքներից առանց այդ էլ հստակենս պետական մնացած ձեռնարկությունները, այս պարագայում ավիաընկերությունները: Այսօրվա իրավիճակով արդեն մրցակցություն կա համաշխարհային օդային փոխադրողների միջեւ դեպի Հայաստան կատարելու իրենց չվերթը: Առանց այդ էլ որպես պետական լիդեր ավիաընկերություն «Հայկական ավիաուղիները» դժվար է դիմակայում համաշխարհային ազատ մրցակցությանը, իսկ ներքին մասնատումը հարված է թիկունքից: Ի վերջո մեկ տարի տեւած բանակցությունները տվել են իրենց արդյունքները: ՀԱՈՒ ավիաընկերությունը շուտով կսկսի շահագործել եվրոպական արտադրության առաջին օդանավը A 310, որը տրամադրելու է վարձակալությամբ «Էրբաս» կոնսորցիումը:

Մի փոքր այլ է պատկերը «Արարատ Ավիա» եւ «Գյումրու ավիաուղիներ» ավիաընկերություններում: Երկու ավիաընկերություններն էլ իրականացնում են չվերթեր նախկին խորհրդային միության տարբեր քաղաքներ («Արարատ Ավիա», ՅԱԿ-40, «Գյումրու ավիաուղիներ», ՏՎ-134 տիպի օդանավերով):

«Գյումրու ավիաուղիներ» ՊԴՁ հնարավորություն է ստացել վերջերս քաղաքացիական ավիացիայի կողմից կնքված «Կարս»-ի պայմանագրի շրջանակներում իրականացնելու Գյումրի-Կարս-Ստամբուլ-Գյումրի չվերթը «Շիրակ» օդանավակայանից:

Միշտ էլ ցանկալի է ունենալ հարուստ ավիացիա, որն ունի նաեւ ռազմաստրատեգիական նշանակություն: Իսկ այդպիսին ունենալու համար պետական մոտեցումներ են պետք:

ԱԼԻՍԱ ՊՈՂՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԵՐԿՈՒՍՔ

«Հինգշաբթին»՝ Կարեն Դեմիրճյան ֆենոմենի բարձրակետ

Ընտրությունների առաջին փուլում նախընտրական քարոզչության վերաբերյալ արեւմտյան փորձագետների դիտողություններից մեկն ուղղված էր մամուլին: Մամուլը, քարոզչության համար նախատեսված սուղ ժամկետում, հեւիհեւ լուսաբանելով նախընտրական իրադարձությունների սրընթաց վազքը, չհասցրեց քննարկել-համեմատել թեկնածուների ծրագրերը. հայերս «բարբարոսաբար» ընտրություն կատարեցինք ոչ թե ծրագրերի եւ գաղափարախոսությունների, այլ անձերի միջեւ: Հիմա, երբ թեկնածուները երկուսն են, մամուլը հնարավորություն ունի լրացնելու բացը: Սակայն կուտ, գեղեցիկ ծրագիր մենք տեսել ենք (օրինակ, «Հանրաքեւեռություն» միավորման հրադարձիչ ծրագիրը, որի բազմաթիվ կետերից իրագործվեց, թերեւս, միայն շուրջօրյա էներգամատակարարումը): Ուստի ծրագրի ետեւում չտեսնել այն իրագործելու կոչված անձին, համաձայնեք, անհնար է եւ, ուզենք, թե չուզենք, ի վերջո մեր ընտրությունը հանգում է անձերին: Մանավանդ, թեկնածուների ծրագրերն, ըստ էության, համատեղելի են եւ սկզբունքային տարաձայնություններ չունեն:

Իսկապես «Ազգն» արդեն արձանագրել է (Ռ. Հովհաննիսյան) արցախյան կարգավորմանն առնչվող դրույթները երկու թեկնածուների ծրագրերում համահունչ են խաղաղ բանակցություններ, Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի ճանաչում: Սակայն, եթե հայտնի նորությունը կարելի է համար տեսանելի է, որ Կարեն Դեմիրճյանն «ազատ լինելով ղարաբաղյան շարժման բողոքաքանչությունից», հռչակված դրույթի շրջանակում «խուսափելու» մեծ ազատություն ունի, արդեն հասարակ մահկանացուներիս համար էլ գաղտնիք չէ, որ կոմկուսի նախկին առաջին քարտուղարն, իրոք, ի տարբերություն ՀՀ նախկին նախագահի, կապկանդված չէ միջազգային ճնշումներին բանակցությունների ինչ-որ օրակում տեղի տալու բարոյական արգելքներով (եթե Ղարաբաղը եւ Հայաստանն, անշուշտ, հնարավոր համարեն նման շրջադարձը): Տեր-Պետրոսյանին միշտ կարելի էր դիտեցնել արցախյան ալիքով իշխանության գալու հանգամանքը: Կարեն Դեմիրճյանի դեպքում, ընդհակառակը, հարկ կլիներ հիշել, որ նա արցախյան շարժման «մեղսակիցը չէ», ասել է թե արցախյան բարձրագույն «գործակից» ունի, առավել եւս, որ Դեմիրճյանի ընտրությունն ինքնին արցախյան հիմնախնդրից Հայաստանի «հոգնածության» սկսած խոստովանություն կլիներ: Ասվածից չի բխում, թե ընտրելու դեպքում Կարեն Դեմիրճյանն առաջին իսկ հարմար առիթով «ծախելու է» Ղարաբաղը, սակայն միջազգային ճնշումներին կկարողանա՞ դիմադրել Արցախ [illegible] nsf չդրած գործիչը, [illegible]ը չփորձեց ընդդիմանալ «պոստբյուրոյի» կամքին գրեթե բանտցիկ սահմաններով բաժանված եղբայրական հանրապետությունների ընտանիքում: Հայ ընտրողը պետք է որ լրջորեն ծանրություններ անի այս խնդրում երկու թեկնածուների «դիվիդենտները» [illegible] անգամ շատի մեկ անգամ կտ[illegible] քվեաթերթիկի վրա իր վճռոն[illegible]



մա, երբ թեկնածուները երկուսն են, մամուլը հնարավորություն ունի լրացնելու բացը: Սակայն կուտ, գեղեցիկ ծրագիր մենք տեսել ենք (օրինակ, «Հանրաքեւեռություն» միավորման հրադարձիչ ծրագիրը, որի բազմաթիվ կետերից իրագործվեց, թերեւս, միայն շուրջօրյա էներգամատակարարումը): Ուստի ծրագրի ետեւում չտեսնել այն իրագործելու կոչված անձին, համաձայնեք, անհնար է եւ, ուզենք, թե չուզենք, ի վերջո մեր ընտրությունը հանգում է անձերին: Մանավանդ, թեկնածուների ծրագրերն, ըստ էության, համատեղելի են եւ սկզբունքային տարաձայնություններ չունեն:

Իսկապես «Ազգն» արդեն արձանագրել է (Ռ. Հովհաննիսյան) արցախյան կարգավորմանն առնչվող դրույթները երկու թեկնածուների ծրագրերում համահունչ են խաղաղ բանակցություններ, Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի ճանաչում: Սակայն, եթե հայտնի նորությունի համար տեսանելի է, որ Կարեն Դեմիրճյանն «ազատ լինելով ղարաբաղյան շարժման բողոքաքանչությունից», հռչակված դրույթի շրջանակում «խուսափելու» մեծ ազատություն ունի, առդա հասարակ մահկանացուներիս համար էլ գաղտնիք չէ, որ կոմկուսի նախկին առաջին քարտուղարն, իրոք, ի տարբերություն ՀՀ նախկին նախագահի, կապկանդված չէ միջազգային ճնշումներին կկարողանա՞ դիմադրել Արցախ [illegible] nsf չդրած գործիչը, [illegible]ը չփորձեց ընդդիմանալ «պոստբյուրոյի» կամքին գրեթե բանտցիկ սահմաններով բաժանված եղբայրական հանրապետությունների ընտանիքում: Հայ ընտրողը պետք է որ լրջորեն ծանրություններ անի այս խնդրում երկու թեկնածուների «դիվիդենտները» [illegible] անգամ շատի մեկ անգամ կտ[illegible] քվեաթերթիկի վրա իր վճռոն[illegible]

մումով: Խորհրդային անցյալի կարոտաբաղձությամբ չախտահարված մեր հայրենակիցների զգալի մասն, ընդհակառակը, սարսափով է վերաբերվում Դեմիրճյանի վերադարձին, վերջինիս գրեթե նույնացնելով կոմկուսի ներկայիս առաջնորդի հետ «ետդեմի սոցիալիզմ» խորհրդանշերում: Այդ առումով վտանգավոր չհամարելով Կարեն Դեմիրճյանին, քանզի նա բավականաչափ իրատես է հասկանալու համար, որ անցյալը չի վերադառնալու, որ Հայաստանի աղագան, այսպես թե այնպես, շուկայական հարաբերությունների բնականոն զարգացումն է, ժողովրդավարական արժեքների ասիճանական արմատավորումը մեր կյանքի բոլոր ասպարեզներում, սփոփված ենք հարցականի տակ դնել նախագահի այս թեկնածուի ազատ տնտեսությանը միս ու արյուն տալու նեռուժը (ոչ ցանկությունը):

Մարտի 15-ի ասուլիսում, առաջին անգամ հանդիպելով լրագրողներին, պարոն Դեմիրճյանը տարակուսեց, ինչո՞ւ միայն իր պարագայում է առաջանում վերջին 10 տարում արած-չարածի խնդիրը (խոսքը «Հայէլեկտրամեքենա» գործարանի մասին է): Մինչդեռ պատճառը հստակ է: Մյուս թեկնածուների գործունեությունն այդ տարիներին հասարակության աչքի առաջ էր, մինչդեռ Կարեն Դեմիրճյանը, հեռացած լինելով քաղաքական ասպարեզից, հայտնի է իբրեւ «Հայէլեկտրամեքենայի» հաջողակ տնօրեն, եւ հստակորեն անցած տարիներին գործարանը «շահելու-պահելու», վայրի շուկայի պայմաններում Հայաստանի տնտեսության այս թեկորը պահպանած լինելու հանգամանքն է ներկայացվում իբրեւ նախագահի թեկնածուի գլխավոր արժանիքներից մեկը, եթե չասենք ամենագլխավորը: Մինչդեռ պարոն Դեմիրճյանն ինքն էլ ընդունում է, որ վերջին տարիներ[illegible]

«մեղքերը» չարժե շահարկել, սակայն երաշխիք կա՞, որ, ընտրելով Դեմիրճյանին, չենք հայտնվի կոտրած տաշտակի առաջ այն դեպքում, երբ ներկայիս վարչապետի գործունեության միակ տարին արդեն իսկ տնտեսական բարեփոխումների որոշակի սաղմեր ունի ըստ այդմ, աղագային ավելի վստահ նայելու հիմքերով:

Պարզաբանման կարոտ է նաեւ Դեմիրճյանի այն հայտարարությունը, թե, ի տարբերություն 96-ի նախագահական ընտրությունների, այս ընտրություններին իր մասնակցությունը պայմանավորված է հասարակական պահանջով: Պարոն Դեմիրճյանն, իհարկե, հազիվ թե «օգտագործվեր» որեւէ մանավանդ խորաթափանցությամբ իրեն զիջող գործչի կողմից, սակայն, այնուամենայնիվ բնական հարց է առաջանում, հասարակական պահանջն ապրյոք թելադրված չէ՞ր այս ընտրություններում Տեր-Պետրոսյանի բացակայության գործոնով:

Որքան տպավորիչ էր Դեմիրճյանի նորամուտը հետխորհրդային Հայաստանի քաղաքական թեմահարթակ (խոսքը «Հինգշաբթի» ծրագրի հայտնի հաղորդման մասին է, որով Դեմիրճյանը ներկայացավ իբրեւ բարձր քաղաքական մշակույթի տեր, ողջամիտ, ճկուն, մեր պայմաններում նորովի գործելու ընդունակ անհատ), այնքան հիասթափեցնող էին նրա հետագա ելույթները լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: Լրագրողների բազմաթիվ հարցերը ասուլիսից ասուլիս ավելի ու ավելի խուսափուկ, տեղ-տեղ, ցավոք, էժանագին հումորի միջոցով շրջանցվող պատասխաններ էին ստանում: Նախագահի թեկնածուն ակնարկների եւ խոսքը կտուրը գցելու գործելակերպով կարծես խորամանկում էր լրագրողների եւ, նրանց միջոցով սեփական ընտրազանգվածի հետ սկսած իր շաբաթում հիշական «նոմենկլատուրիկների» բուռն ակտիվության եւ թիկնապահների որակական կազմի մասին հարցերից մինչեւ Արցախի հիմնախնդրի կարգավորման մոտեցումների վերաբերյալ պարզաբանումներ ակնկալող հարցադրումները:

Կարեն Դեմիրճյանի ասելիքն «Հինգշաբթին», թերեւս, ընտրությունների երկնակամար մարված քաղաքական ասուպի բարձրակետն էր, եւ Ռոբերտ Քոչարյանի հետ հեռուստաբանավեճին անիրագործելի նախապայմաններ ներկայացնելու միջոցով ուժերի «սուգաբեսից» խուսափելու իրողությունը Կարեն Դեմիրճյանի ինքնավստահության ասելիքի հստակության լավագույն վկայությունը չէ...

ԼԻԼԻԹ ՊԱՊԼՈՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Մեկ ժամ, որ վերջինը չի լինելու

Սկիզբը էջ 1

Բնականաբար, բավական շատ հարցեր տրվեցին նախագահական ընտրությունների առաջին փուլի ժամանակ արձանագրված խախտումների, դրանց կատարողներին պատժելու, երկրորդ փուլն առանց այդպիսի խախտումների անցկացնելու վերաբերյալ: Պրն Քոչարյանն այդ առթիվ ընդգծեց, որ «բոլոր կոնկրետ դեպքերի վերաբերյալ իրական գործերը հարուցված են», օրինախախտումների առթիվ ստացված բողոքները «մտնում են դատախազություն եւ քննություն է կատարվում»: Դատախազներից ոմանք իր հրամանագրով արդեն ազատվել են աշխատանքից, եւ պատճառը ստացված բողոքների առթիվ «ոչինչ չձեռնարկելն էր»: Վարչապետն ավելացրեց, թե հենց թեկուզ նախընտրական նկատառումներով իրեն «շատ պետք է այդպիսի դեպքերի բացահայտումը եւ մեղավորներին պատժելը»: Սակայն պրն Քոչարյանը բավականին կարեւորում էր մարդկանց ճակատագրերին զգուշորեն վերաբերվելը, բամբասանքներին, ասեկոսեներին, շահարկումներին տուրք չտալը, եթե նույնիսկ այդպիսի շահարկումները տեղ են գտնում մամուլի էջերում: Օրինակ, «Առավոտի» աշխատակից Աննա Իսրայելյանի կոնկրետ մատնանշմանը՝ ոչ անհայտ Ատոմ Աղաբաբյանի կողմից ընտրությունների ժամանակ հոգուս Քոչարյանի խախտումներ կատարելու մասին, որի առթիվ բավական արծարծումներ եղան մամուլում, վարչապետը պատասխանեց, որ կատարված քննությամբ պարզվել է, թե «Ատոմ Աղաբաբյանը ընդհանրապես այդ տեղամասում չի եղել», եւ առաջարկեց լրագրողներիս՝ կատարել սեփական լրագրողական հետաքննություն, խոստանալով մեր հայտնաբերած ամեն փաստ ընդունել շնորհակալությամբ եւ պատժել մեղավորներին:

Պրն Քոչարյանը հավաստիացրեց, թե ընտրական գործընթացի ցանկացած խախտման ինքը մերժողաբար է վերաբերվում, ավելացնելով, որ դրանք կատարվել են ոչ միայն իր օգտին, այլեւ մյուս թեկնածուների. «Փաստեր կան, որ մարդկանց կաշառել են, փող են բաժանել, ահաբեկել...»: Թեկնածուներից մեկի վստահված անձին հափշտակելու վերաբերյալ թղթակցի տված հարցի առթիվ պրն Քոչարյանը նկատեց, թե «նման դիմում չի ստացվել»:

Նախագահի թեկնածու Կարեն Դեմիրճյանին իրական պատասխանատվության կանչելու համար նյութեր նախապատրաստելու մասին Պարույր Հայրիկյանի հեռուստատեսությամբ կատարած հայտարարությանը գնահատական տալու իմ խնդրանքին պրն Քոչարյանը պատասխանեց, որ այդ մասին առաջին անգամ է լսում, ժամանակ չի ունենում հեռուստացույց նայելու եւ նույնիսկ չի հետեւում իր օգտին ծավալվող քարոզչությանը: Գործընկերներիցս մեկի հարցադրմանը՝ նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին իրական պատասխանատվության կանչելու մասին, որի պահանջն առաջ է քաշել Վահան Հովհաննիսյանը, վարչապետն առարկեց, իր նախագահ դառնալու դեպքում անհրաժեշտ է համարում «քաղաքական գնահատական տալ նախորդ շրջանում կատարվածին», սակայն եթե մարդու վրա «կոնկրետ իրական մեղադրանք չկա», ապա նախագահներին պատժելու վաս ավանդույթ չպիտի ստեղծվի: Վահան Հովհաննիսյանի պահանջն այդ առթիվ պրն Քոչարյանը հակված է դիտարկելու իբրեւ հուզական, սուբյեկտիվ դրսեւորում, երկուսուկես տարի անտեղի բանտ նստած մարդու վիրավորված սրտի պոռթկում: Վարչապետը գրեթե նույն կերպ անդրադարձավ «Վանո Սիրադեղյանի կառուցած դղյակին»: Եթե դրա համար պիտի պատժենք, ապա «ինչո՞ւ անպայման մեկին եւ հենց նրան»: Չէ՞ որ ուրիշներն էլ են դղյակներ կառուցել, իսկ Հայաստանում այդպիսի շինարարություն կատարելն արգելող օրենք չի եղել: Ուրիշ հարց է, եթե պարզվի, որ այդ դղյակները կառուցվել են անաբիծ եկամուտներով, իրոնրեն հետադարձելի ճանապարհով ծեռք բերված միջոցներով: Այդ դեպքում արդեն «բոլոր մեղավորներն անպատճառ պիտի պատժվեն»: Այստեղից կարեւորվեց պետական համակարգի բարեփոխումների անցկացումը, դատական իշխանության իրական անկախության երաշխավորումը. «Դատական ողջ համակարգը պիտի փոխվի, ընդգծեց պրն Քոչարյանը, դատավորը մեզանում ինքն էլ պատասխանված չի, նախագահը ցանկացած պահի կարող է նրան ազատել աշխատանքից»:

Անդրադառնալով Հայաստանի տնտեսությանը, մասնավորապես գյուղատնտեսությունը ոտքի կանգնեցնելու հարցադրումներին, պրն Քոչարյանը կարեւորեց գյուղացուն հարկավարկային քաղաքականությամբ սատարելը. «Փաստորեն գյուղացին մեզանում միայն մեկ հարկ է տալիս, հողի հարկը, այն էլ ամբողջովին մնում է համայնքում, սակայն ես գյուղը լավ գիտեմ, գյուղացին դարձել է հողին գերի...»: Կրկին ու կրկին կարեւորելով պետական բյուջեի մուտքերի ապահովման հարցը, վարչապետն ընդգծում էր, որ ինքն իր աշխատանքում մշտապես առաջնորդվել է բյուջեով՝ այս տարի կարողացել է բյուջեից 1,8 մլրդ դրամի փոխհատուցումներ վճարել խմելու եւ ոռոգման ջրերի դիմաց, ինչի հետեւանքով հնարավոր եղավ կրկնակի իջեցնել ոռոգման ջրի վարձերը. «Իսկ անցյալ տարի բյուջեով այդպիսի փոխհատուցում նախատեսված չէր, բյուջեն դատարկ էր»: Ափսոս, վարչապետը չխոստացավ նույն կերպ առաջիկայում փոխհատուցել էլեկտրաէներգիայի վարձավճարը, ինչի մասին մենք հարց բարձրացրինք, սակայն նա այդ խնդրի լուծումը նույնպես կապեց բյուջեի հնարավորությունների հետ: Խոստանալով պահպանել տնտեսության լիբերալ-բաց մոդելը, պրն Քոչարյանը գտնում էր, որ «շուկայական հարաբերություններն ամբողջ աշխարհում այլընտրանք չունեն, ուրիշ հարց է, թե ո՞ր ճանապարհով ենք գնալու՝ *շուկային թերապիայի* թե պետական կարգավորման»:

Վերադառնալով նախընտրական քարոզարշավին եւ պատասխանելով այդ առթիվ կրկին ու կրկին բարձրացվող հարցերին, վարչապետն ընդգծում էր, որ իր ընտրարշավը «Սուլիասյան Խաչիկը չի ֆինանսավորում, ամեն ինչը գրանցվում է եւ կիրառարկվի», ինքը հաշվապահ չէ եւ ամեն օր չի հաշվում, թե ինչքան գումար է ծախսվել: Մինչդեռ խորհուրդ կտար հետաքրքրվել մյուս թեկնածուների ծախսերով. «Ես շրջաններ էի մեկնում 2-3 մեքենայով, մրցակիցս (այս անգամ նկատի ունեմ Վազգեն Մանուկյանին)՝ 30-40 մեքենայով, իսկ այդ ամենը ծախս է»: Վարչապետն անքննարելի էր համարում, որ իր մրցակիցները դրսի մամուլում (նկատի ունեմ Ռուսաստանը) իրեն անվանարկող պատվիրված հոդվածներ են հրապարակում, հուսալով, թե դրանով կարող են ազդեցություն գործել մեր ընտրազանգվածի տրամադրությունների վրա: Պրն Քոչարյանն ընդգծեց, թե գիտի եւ այստեղի պատվիրատուներին, եւ Մոսկվայի կատարողներին, հասկացնելով, որ, էական նշանակություն չի տալիս դրան:

Պրն Քոչարյանը չժխտեց, որ մեր տարածաշրջանում աշխարհաքաղաքական շահեր հետապնդող դրսի ուժերը կարող են փորձ կատարել զանազան միջոցներով ազդելու մեր ընտրությունների վրա, սակայն գրեց իմ տագնապն այն առթիվ, թե «ԵԱՀԿ-ը կարող է չճանաչել մեր ընտրությունների երկրորդ փուլի արդյունքները»: Այդ առթիվ պրն Քոչարյանը նկատեց, որ ուրախ կլիներ, եթե ԵԱՀԿ-ը լավ գնահատեր մեր ընտրությունները, սակայն, ի վերջո, «մենք ուրիշի համար չենք ընտրություններ անցկացնում, մեզ համար ենք անցկացնում», ուստի կարեւորն է, որ մենք իրոք ազատ ու արդար ընտրություններ ապահովենք եւ պարտվողը ազնվություն ունենա հաղթողին շնորհավորելու:

Հանդիպման ընթացքում շոշափվեցին նաեւ բազմաթիվ այլ հարցեր եւ դա հնարավորություն տվեց լրագրողներիս՝ «առաջին աղբյուրից» ստանալու մեզ հուզող շատ խնդիրների պատասխանները:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ընտրություն

Հայաստանին նոր կեցվածքի գործիչ է պետք

Ինչպես հայտնի է, քաղաքական չորս եւ հասարակական մեկ կազմակերպություններ ՀՅԴ-ն, ՀՌԱԿ-ը, ԳԻԱՐՔՄի-ն, Սոցիալական ուժերի միությունը եւ «Երկրապահ» կամավորական միությունը ստեղծել են «Արդարություն եւ միասնություն» համագործակցություն ՀՀ նախագահական ընտրություններում աջակցելով թեկնածու Ռոբերտ Քոչարյանին։ Այս եւ ուրիշ հարցերի շուրջ զրույց ԳԻԱՐՔՄի-ի նախագահի պատասխանատու Ալեքսանդր Աղամալյանի հետ։

– Չնայած առաջին փուլի հաղթողներն հայտնի են, այնուամենայնիվ, քաղաքական կրքերը չեն հանդարտվում։ Որոշ թեկնածուներ, անգամ նրանք, ովքեր ստացել են չնչին քանակությամբ ձայներ, ընտրությունների առաջին փուլը համարում են ոչ արդար՝ քննադատության թիրախ դարձնելով հենց Ռոբերտ Քոչարյանին եւ նրա աջակիցներին։ Դուք ի՞նչ կարծիքի եք ընտրարավի մասին։

– ԳԻԱՐՔՄի-ի գնահատականը միանշանակ է։ Համեմատած 1996-ի նախագահական ընտրությունների հետ, առաջընթացն ակնառու է։ Խոսքը որակական տարբերության մասին է։ Չնայած խախտումներ կային, սակայն դրանց բացահայտման դեպքերում, հակառակ անցյալին, անմիջապես ձեռնարկվում էին համապատասխան միջոցներ դրանք կանխելու համար։ Նկատի ունեմ եւ Արարատի միջադեպը, եւ այն բոլոր տեղամասերը, որ ընտրությունների ընթացքում ստացել էր Կենտրոնական ընտրական հանձնաժողովը։ Պետք է նշել, որ խախտումներ էին կատարել նաեւ Դեմիրճյանի, Մանուկյանի եւ այլ թեկնածուների կողմնակիցները։

Անշուշտ գովելի է թեկնածուների եւ նրանց համախոհների սկզբունքային պահանջը ընտրությունները եվրոպական չափանիշներով կազմակերպելու եւ անցկացնելու։ Սակայն ստեղծվում է տպավորություն, որ արդարության «տենչը» լոկ քաղաքական բանսարկության դրսեւորում է։ Չէ՞ որ թեկնածուների մեծ մասը քաղաքական գործիչներ են եւ հաջ գիտակցում են, որ ՀՀՇ-ի ստեղծած զավեշտական ավանդույթն այս կարճ ժամանակաշրջանում ոչ Ռոբերտ Քոչարյանը, ոչ էլ մեկ ուրիշն ի վիճակի չէր արմատախիլ անել։ Վերջին մի քանի տարվա ընթացքում ռասարատությունում անցկացվել են երեք ընտրություններ եւ երեքն էլ կոպիտ խախտումներով։ Անկասկած, ես կասեի միտումնավոր անկասկած մշակված օրենքների այն համալիրը, որը կանոնակարգում է ընտրությունների կազմակերպումն ու իրագործումը, արդեն իսկ չի ապահովում բյուրեղյա պայմաններ։ Եվ ինչո՞ւ այս ամենի մեղավորը պետք է համարվի Ռոբերտ Քոչարյանը, որը 40 օրում հրաշքներ չէր կարող գործել։ Միգուցե մեղքի մեծ բաժինը հենց այն թեկնածուներինն է, որոնք 10 երկար ու ձիգ տարիներ հանդուրժել են ՀՀՇ-ի խաղի կանոնները։ Չեմ հիշում, որ Դավիթ Շահնազարյանը, Վիգեն Խաչատրյանը կամ Ասոն Բլեյանը նույն «հեռեւողականությամբ» պայքարեին 95-ի կամ 96-ի իսկապես անարդար ընտրությունների դեմ։

Վարչապետը հստակ հայտարարել էր, որ ընտրությունները պետք է լինեն ազատ եւ արդար։ Խախտումների տեղիք տվողները, իր իսկ ասելով, փորձել են արջի ծառայություն մատուցել իրենց թեկնածուին։ Այուս դեպքերում էլ խախտումներն այնքիսի կանխամտածված եւ ցուցադրական էին, կարծես նպատակաուղղված լինեին հենց Ռոբերտ Քոչարյանին վարկաբեկելուն։

Այնուամենայնիվ, կարծում եմ, Հայաստանում չկա մի մարդ, որ համոզված չլինի, երկրորդ փուլ են անցել Քոչարյանը եւ Դեմիրճյանը։ Բավական մեծ էր տարբերությունը երկրորդ եւ երրորդ տեղերը գրաված թեկնածուների միջեւ։

– Ինչպե՞ս եք գնահատում տխրահռչակ հայտարարությունը՝ ընտրությունների անօրինական ընթացքի վերաբերյալ։

– Այսօր արդեն հայտարարությունը լոկ թուղթ է դարձել։ Ինչպես գիտեք, Պարույր Հայրիկյանն օրերս արտահայտեց իր դիրքորոշումը, Բաղալյանն առանձնապես ջանքեր չի գործադրում հիմնավորելու հայտարարության գնահատականները, Դեմիրճյանն իր մասնակցությամբ երկրորդ փուլին արդեն իսկ հաստատեց առաջին փուլի արդյունքը։

Հասկանալի էր ԱԺՄ-ի դիրքորոշումը, քանի որ ԱԺՄ-ի սպասելիքները մեծ էին, եւ դեռ ընտրություններից մի քանի օր առաջ հայտարարվում էր, եթե մեր թեկնածուն չհաղթի, ապա ընտրություններն անարդար են։

Մնացած թեկնածուները, որոնք հավաքել են չնչին տոկոսներ, նախընտրական արշավ մեկ մի նպատակով վարկաբեկել թե ընտրությունների ընթացքը, թե դրական փոփոխությունները Հայաստանում։ Ցավոք, այդ ուժը կորցրած հայտարարությունը կարող է օգտագործվել հետագայում քաղաքական շահարկումների նպատակով։

– Ի՞նչ նկատի ունեք քաղաքական շահարկումներ ասելով։

– Իմ կարծիքով, հայտարարությունը ստորագրողների մի մասը, գիտակցաբար կամ անգիտակցաբար, կատարում է ինչ-որ պատվեր։ Չեմ կարող ասել Արեւմուտքի, թե ՀՀՇ-ի։ Միգուցե երկուսինն էլ։ Սակայն ակնհայտ է, որ նման մոտեցումը կարող է լուրջ հարված հասցնել մեր ազգային շահերին։ Մեծ պետությունները միշտ էլ ձգտում են աղագա նախագահի հանդեպ որեւէ լծակներ ձեռք բերել, ինչը թույլ կտա հետագայում իրենց հետաքրքրող հարցերի լուծումը հեշտացնել։ Դա, իհարկե, առաջին հերթին վերաբերում է Արցախի հիմնահարցին։

Դրանով է, երեւի, բացատրվում դիտորդների մի խմբի անտպասելի եւ, իմ կարծիքով, անհիմն եզրակացությունն իբր տեղի ունեցած լուրջ խախտումների մասին սկզբում 15, իսկ հետո 25 տոկոս ընտրական տեղամասերում։ Խիստ կողմնակալ էին նաեւ «Վեստի» եւ «ՆՏՎ» հեռուստաընկերության ռեպորտաժները։



Լավ ճանաչելով Ռոբերտ Քոչարյանին արցախյան գոյամարտի համատեղ գործունեությամբ կարող եմ հավաստել, որ նման մոտեցումն ի սկզբանե դատապարտված է ձախողման։ Քոչարյանը Տեր-Պետրոսյան չէ։

– Ձեր կանխատեսումները երկրորդ փուլի վերաբերյալ։

– Թվում է, թե Դեմիրճյանի առաստելն աստիճանաբար ցրվում է։ Քայլ առ քայլ հարցերի նրա կողմից պատասխան չտրվեց։ Իսկ Քոչարյանի շուրջը կարող է ստեղծվել քայլ ավելի լայն քաղաքական խմբավորում։ «Պատերազմի» եւ «իշխանատենչ ղարաբաղցիների» մասին հակադարձությունը, կարծես, ուժը կորցնում է։

Սակայն տագնապ է հարուցում մի ուրիշ հանգամանք։ Ժողովրդին ամեն կերպ փորձում են ներշնչել, որ Քոչարյանն է ռեժիմի, կլանի մարմնավորողը, նա է ՀՀՇ-ի հետնորդը։ Որպես փաստարկ բերվում է այն հանգամանքը միայն, որ Քոչարյանը գործող վարչապետ է։

Բայց չէ՞ որ հենց Ռոբերտ Քոչարյանը խարխլեց սովետական մաֆիոզ կառույցների հիմքերը սահմանելով նրանց հարկեր մուծել պետական բյուջե։ Քոչարյանը վերջ դրեց ՀՀՇ-ի ամենաշիրությանը։ Նա ազատեց բանտախցերից եւ օրինականացրեց ամենաազդեցիկ ընդդիմադիր ուժը Դաշնակցությունը։ Արեց այն ամենը, ինչի ձգտում էր միացյալ ընդդիմությունը։ Այն միացյալ ընդդիմությունը, որի առաջնորդները չկարողացան պատշաճ կերպով օգտագործել Դաշինքի ներուժը։

Այուս կողմից, ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ կլանայնության արմատները ձգվում են բրժնեյան լճացման տարիներ եւ ավելի շուտ կարող են կապված լինել այն ժամանակի բարքերի հետ, որը համընկնում է Կարեն Սերոբիչի ղեկավարման շրջանին։ Ուշադրության է արժանի Ռաֆայել Ղազարյանի հայտարարությունը, թե Դեմիրճյանին աջակցում է ՀՀՇ-ն։ Նման չհավատալու հիմքեր չեմ տեսնում, մանավանդ որ Դեմիրճյանի օգտին եւ նրա ընտրական շտաբներում աշխատում են ՀՀՇ-ի փորձ եւ մեծ գործիչներ։

Դրա մասին է վկայում նաեւ ՀՀՇ պատասխանաբերը «Հայք»-ի հակաքոչարյանական դիրքորոշումը։ Դա երեւում է նաեւ Սիրադեղյանի հետ նույն թիկնապահ ունենալու եւ ՀՀՇ-ի առաջատար Ասոն Բլեյանի Դեմիրճյանի թեկնածությունը պատշաճանելու փաստերից, ինչքան էլ պրն Դեմիրճյանը հերքի այդ վարկածը, եւ ակադեմիկոս Ղազարյանի հասցեին թույլ տա արտահայտություններ, որոնք հարիր չեն ոչ միայն քաղաքական գործչի, այլեւ ցանկացած հայ մարդու։ Կարծում եմ, հենց Դեմիրճյանի գալով իշխանության կվերադառնա ոչ միայն ՀՀՇ-ական, այլեւ լճացման տարիների նոմենկլատուրան՝ իր ողջ կազմով, ինչի մասին վկայում է նաեւ ձայների բաշխումը Մոսկվայում։ Այն քաղաքում, որտեղ մեծամասամբ կենտրոնացել է հին նոմենկլատուրայի գվարդիան, որը, վտարանդվելով Հայաստանից, ի հայտ բերեց կուսակցական նյութական միջոցները՝ վերածվելով նոր հայերի։

Բոլոր դեպքերում, ժողովուրդն այնքան իմաստուն է, որ կկարողանա տարբերել թացը չորից։ Ուստի համոզված եմ, որ Քոչարյանն ունի 2-րդ փուլում ձայների զգալի մեծամասնությամբ հաղթելու բոլոր իրական հնարավորությունները։ Ավելի մեծ տարբերությամբ, քան 1-ին փուլում։

– Այդուհանդերձ, Հայաստանում 1-ին փուլից հետո ձեւավորվել է քաղաքական նոր իրադրություն։ Քաղաքական դաշտում ես տեսնում եմ ուրույն բեւեռացում, մի կողմից «Արդարություն եւ միասնություն» համագործակցության, Քոչարյանին համակրող այլ քաղաքական ուժերի, մյուս կողմից՝ հակաքոչարյանական բանակ։ Ուզում ենք, թե ոչ, բայց բեւեռացումը երկու թեկնածուներ շուրջ է, այսպես, ռասարակությունն ընտրություններով նորից պառակտվեց։ Այդպես չէ՞։

– Այնքան էլ համաձայն չեմ այդ բաժանմանը։ Նախագահական ընտրությունը «Արդարություն եւ միասնություն» համագործակցության ռազմավարական նպատակների լոկ առաջին փուլն է։ Մեր նպատակն իրոք անկախ ժողովրդավարական պետության ստեղծումն է, եւ ոչ միայն հայաստանաբնակների, այլեւ ողջ հայության համար։

Այդ տեսակետից թեկնածուների բանակում գաղափարակիցների տեսնում ենք։ Նկատի ունեմ Արամ Սարգսյանին (ՀՅԴ), Հրանտ Խաչատրյանին (ՍԻՄ), Արտաշես Գեղամյանին (ԱՄԿ), Պարույր Հայրիկյանին (ԻՄ)... Ինչպես տեսնում եք, միասնության կողմնակիցների քաղաքական դաշտը բավականին ընդլայնվում է։

Ինչ վերաբերում է 2-րդ բեւեռին... Չնայած Սերգեյ Բաղալյանը եւ Վազգեն Մանուկյանը հայտարարությունը ստորագրել են, այնուամենայնիվ, նրանց չի կարելի դասել Կարեն Դեմիրճյանի համախոհների շարքը։ Հայկոմկուսն արդեն արտահայտել է իր վերաբերմունքը Կարեն Դեմիրճյանի թեկնածության վերաբերյալ։ ԱԺՄ-ի որոշակի տրամադրվածության մասին վկայում է նաեւ այն փաստը, որ հայտարարությունն ստորագրելուց հետո ԱԺՄ-ն չի ծեռնարկել որեւէ քայլ, որը կարող է ապակայունացնել ներքաղաքական իրավիճակը Հայաստանում։

Ինչ մնում է մյուս նախագահացուներին... նրանց վարքագծի դրդապատճառները ակնհայտ են։ Ներկայացնել դրածոների եռյակը որպես քաղաքական բեւեռ, մեղմ ասած, անլուրջ է։

– Կարո՞ղ եմ եզրակացնել, որ քաղաքական այս վերլուծությունն է ձեզ վստահություն ներշնչում Ռ. Քոչարյանի անվիճելի հաղթանակի հարցում։

– Այո։ Եվ ոչ միայն վերլուծությունը։ Ես համոզված եմ, որ մինչեւ մարտի 30-ը կհաջողվի բացատրել Դեմիրճյանին համակրող ընտրազանգվածին, (իսկ այնտեղ մեծ մասամբ ՀՀՇ-ի կողմից չքավորության դուռը հասցված մարդիկ են, որոնք կուզեն անցյալի կարոտն են տածում), որ դրական տեղաշարժեր կարող են լինել միայն մի դեպքում եթե քաղաքական ասպարեզ գա նոր կեցվածքի ազգային քաղաքական գործիչ ի դեմս Ռոբերտ Քոչարյանի։

Զրույցը վարեց
ՆԱՐԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ

ԱՄԲՈՂ

Ընտրություն լավի ու լավագույնի միջեւ

Ես պատմաբան եմ եւ ոչ մի երեւույթ չեմ կարողանում զատել նախորդ պատմությունից։ Մասնավորապես, երբ խոսքը վերջին, բախտորոշ պահի մասին է, ինչպիսին են ներկայանում ընթացող ընտրությունները։ Մեր ազգը շատ վերջին պահեր է ապրել՝ ողբերգականից մինչեւ հաղթական։ Ներկա պահը ես, գուցե հակառակ շատերի կարծիքի, համարում եմ հաղթական։ Հիրավի, պատմության դարեր տեւած ընթացքից հետո, մենք ստեղծել ենք սեփական ինքնուրույն պետություն։ Սա հաղթանակ է ինչպես բնության արհավիրքների, այնպես էլ զորավոր հակառակորդների նկատմամբ։ Ութ տարի է, ինչ մենք անկախ պետություն ունենք, որը հասել է բավականաչափ մեծ նվաճումների անկախ պետականության կառուցվածքի ստեղծման եւ Հայաստանը աշխարհի հանրությանը ճանաչել տալու ուղղությամբ։ Այսօր շատերը, նախագահի հրաժարականից հետո, հակված են իսպառ մերժելու եւ ջնջելու այդ նվաճումները, վկայակոչելով առկա հիրավի ծանր սոցիալական վիճակը։ Պատմաբանի համար սա ընդունելի չէ։ Նույնը արվում էր, ի դեպ, խորհրդային Հայաստանի նվաճումների նկատմամբ այլ վկայակոչումներով։ Սա, ցավոք, ընդունված սովորություն է։ Իսկ իրականում թույլ տված սխալները մնում են սխալներ, որոնք պիտի ուղղել, հանցանքները մնում են հանցանքներ, որոնց համար պիտի պատժել, իսկ նվաճումներն էլ մնում են նվաճումներ, որոնք չպետք է ուրանալ։ Եթե նայենք մեր շուրջը, մեզ բախտակից անկախ պետություններին, ապա կտեսնենք, որ ոչ մեկից էլ ետ չենք մնացել եւ ոչ մի խնդրում, ներառյալ, նույնիսկ, կենսամակարդակը։

Ներկա ընտրությունների կայացման փաստն այդ նախորդ գործընթացի արդյունքներից մեկն է։ Ապա, մտաբերենք խորհրդային շրջանի ընտրությունները, որոնք տակավին թարմ են մեր հիշողության մեջ։ «Ընտրում» էինք մեկից մեկին, եւ այն էլ 99 եւ ավելի տոկոսով։ Այդպիսի ընտրությունների ընտելացած մարդկանց երկար ժամանակ է պետք, որպեսզի հասկանան, որ ընտրությունները միանգամայն այլ բան են։ Եվ այս ոչ լրիվ տասնամյակում մեր ժողովուրդը հաջողությամբ անցավ այդ ճանապարհն ու յուրաքանչյուր նոր ընտրությունը մի քայլ առաջ են նախորդներից։ Այդ պարզ երեւում է հենց 1995-1996 թթ. ընտրություններն այսօրվա ընտրությունների հետ համեմատելիս։

Այսօրվա ընտրություններ, ամենուրեք կատարյալ չլինելով հանդերձ, խոշոր առաջընթաց են։ Այն ներքին ու արտաքին ուժերը, որոնք սա ժխտում են, ամենուրեք անաչառ չեն, ինչպես փորձում են ցույց տալ։ Ներքին ուժերը դրանով ուզում են արդարացնել իրենց թուլությունը եւ հաղթելու անկարողությունը։ Արտաքին ուժերն, անխառն ժողովրդավարության սպիտակ ծեռնոցներ հագած, փորձում են արդարացնել իրենց կողմնակալ նավթահոս վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ՝ Ղարաբաղի հարցում։ Հետաքրքիր է, ինչպես կարծագանքեին նրանք, եթե մենք մեր պատրիարխալ դիրքերից ինքնատեսնենք նրանց երկրներում հոմոսեքսուալ ամուսնությունները թույլատրող օրենսդրությունը եւ պրակտիկան։

Ես չեմ ուզում այստեղ պարսավանքի խոսք ասել դրանց նկատմամբ՝ պատմությունը, միեւնույն է, կտա իր անաչառ գնահատականը։ Թողնենք այդ պատմությանը եւ վերադառնանք ներկային։ Իսկ ներկան, կրկնում եմ, հաղթական է, բայց եւ մտահոգիչ։ Ընտրությունները միշտ էլ մտահոգիչ են, ինչ էլ որ ընտրելիս լինենք՝ ամուսին, արհեստ, թե նախագահ։ Մի առակ է մնացել հնից՝ Բուրիդանի ավանակի մասին։ Այս Բուրիդանը կանգնեցրել է իր ավանակին երկու հավասար խոտակույտի միջեւ։ Խեղճ կենդանին, չկարողանալով ընտրել, սովամահ է եղել։

Բայց մենք մարդիկ ենք եւ արդեն որոշակի փորձ ունեցող մարդիկ, կարող ենք ջոկել լավը վատից։ Օրինակ բերեմ. նախորդ ընտրություններին մի կարգախոս կար, թե հավակնորդն ընտրվելու դեպքում 10 անգամ կավելացնի աշխատավարձը։ Եվ ի՞նչ։ Այդ կարգախոսով հրապուրվեց ընտրողների կեսը։ Այսօր կարգախոսի հեղինակն ստացավ այդ կեսի մի քառորդը միայն։ Եվ կարգախոսն էլ չինչեց։ Որովհետեւ, թեեւ չի փոխվել ժողովրդի տնտեսական վատ վիճակը, բայց բարձրացել է նրա քաղաքական հասունությունը։ Ուստի եւ այդ կարգախոսին, որի կապակցությամբ կիսոհայերն ոչ միայն Բելգիայի կամ Հոլանդիայի, այլեւ կոնգոյի ընտրողները, այսօր մեզ մոտ էլ չեն հավատում, հասկանալով դրա պոպուլիստական անիրատես բնույթը։

Այնպես որ, եկեք ոչ մի դեպքում չհրաժարվենք ընտրելուց եւ ընտրենք ճիշտ։ Հաղթահարենք անտարբերության եւ հիասթափության զգացումը, որը համակում է մեզ՝ հոգսերի ծանրությունից հոգնած լինելու պահերին, որովհետեւ ընտրելը եւ ճիշտ ընտրությունը այդ պահերից ազատվելու ճանապարհներից մեկն է։ Երեւի ընտրություն կատարելն այս դեպքում, իսկապես, դժվար է, քանի որ գործ ունենք ոչ թե լավի ու վատի հետ, այլ լավի ու լավագույնի։ Այսպիսի պայմաններում ձեր ուշադրությունը պիտի դարձնենք, իհարկե, ընտրվողի այսօրվա պտղաբեր գործունեության վրա, քան թե նրա մասին բարի հուշերի ու պատմածների։ Սա ավելի իրատեսական է։

ԳԱՌԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ակադեմիկոս

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հարցազրույց

Ցանկացած իշխանություն կարիք ունի լիարժեք ընդդիմության

Հարցազրույց ՀՀ ԱԺ փոխնախագահ, «Երկրապահ» կամավորական միության նախագահ Ալբերտ Բազեյանի հետ

– Ասվեց հեղափոխությամբ շրջադարձից հետո նոր իշխանությունների խաղաղասիրության կարեւորագույն գիծը շարունակում է մնալ դարաբաղյան հիմնախնդիրը: Սակայն, եթե «Ղարաբաղ» կոմիտեի գործունեության շրջանում շեղումն ու ժողովրդի մեջ անվստահության աճի դարագան ի հայտ եկավ բավականին ուշ, արդա այսօր արդեն այդ անվստահությունն առկա է հետեւյալ մեկնաբանությամբ. Քոչարյանի ներկայությամբ դարաբաղյան հարցի լուծման անհնարինությունը գալու է ապացուցելու, որ որեւէ ելք չկա (այն ենթադրությամբ, որ նույնիսկ նա ոչինչ չի կարող անել):

– Չեմ կարծում, որ Ղարաբաղի հարցն անլուծելի պիտի լինի մեր ժողովրդի, մեր պետության համար: Ինչ-որ մի պահի հարցը կլուծվի, որովհետեւ առանց Ղարաբաղի հարցի արդարացի եւ իրավական լուծման հայ ժողովուրդն ու հայկական պետությունն ընդհանրապես ապագա չեն կարող ունենալ: Հուսով եմ, որ մեր ժողովուրդը մեկ անգամ եւս կվերհիշի իր պատմությունը եւ կգիտակցի, որ Հայաստանը որպես անկախ պետություն, առանց Ղարաբաղի չի կարող հզորանալ: Տասը տարի շարունակ պայքարել ենք ժողովրդի բազմաթիվ զրկանքների, մեզ պարտադրված պատերազմի գնով: Պատերազմ, որում, փառք Աստծո, հաղթել ենք: Ուրեմն հարցը պիտի ստանա իր հաղթական լուծումը: Այլ տարբերակ չկա: Խնդիրների կարգավորման այն բանաձեւը, որն առաջարկվում է Ռ. Քոչարյանի նախընտրական ծրագրում, մեզի միանգամայն լիովին հարիր է:

– Համեմատելով երկրորդ փուլ անցած թեկնածուների ծրագրերը, Արցախի հարցին մոտեցումների էական տարբերություն չի նկատվում: Մի անգամ Կ. Դեմիրճյանն ասաց, որ այդ մասին բարձրաձայն խոսելու հարկ չկա, պարզապես պետք է գործել: Ի՞նչ եք կարծում, Ռ. Քոչարյանի ծրագիրը եւս գործողություններն ամբողջությամբ ի հայտ չբերելու նպատա՞կ է հետապնդում:

– Լիարժեք ծանոթ չեմ Կ. Դեմիրճյանի ծրագրին. միգուցե ինչ-որ ընդհանրություններ կան: Բայց հաջաեդյակ եմ Ռ. Քոչարյանի ծրագրին, որտեղ հստակ մոտեցում կա հարցի լուծման վերջնական տարբերակի վերաբերյալ: Ընդհանուր առմամբ Քոչարյանի ծրագիրը շատ սեղմ է: Բայց կան դրանց լուծման ճանապարհները, որոնց վրա վարչապետն աշխատել է նաեւ այս ընթացքում: Ընտրվելուց հետո, կարծում եմ, նա ավելի լիարժեք կիրագործի դրանք:

– Լյուդմիլա Հարությունյանն իր վերջին ասուլիսի ընթացքում, թվելով ապագա նախագահի լուծելիք առաջնային խնդիրները, ասում է, որ «առաջին տեղում, իհարկե, Ղարաբաղի հարցն է: Հայաստանն այլեւս չի կարողանում տանել Ղարաբաղի բեռի ծանրությունը, իսկ Ղարաբաղն էլ ուզում է ինքնուրույն հանդես գալ եւ վերցնել բեռի իր բաժինը: Այսպիսի պայմաններում, երբ առաջնային է Ղարաբաղի խնդիրը, գրեթե անխուսափելի է ուժային կառույցների դոմինանտությունը: Այս խորապատկերը լուրջ խնդիրներ է դնում նախագահի առջեւ: Ինչպես երկրում ժողովրդավարություն հաստատել, միեւնույն ժամանակ պահելով Ղարաբաղը»:

– Փաստը ցույց տվեց, որ նախընտրական արշավում թեկնածուներն այնքան էլ շեշտադրված կանգ չառան արցախյան հիմնախնդրի վրա, մինչդեռ այն մեր ժողովրդի համար կենսական հարց է: Եթե նպատակ ունենք իրոք դառնալու հզոր պետություն, եւ իրոք համախմբել ողջ հայության ջանքերը մեկ միասնական ազգային հզոր պետականության գաղափարի շուրջ, ապա այդ ճանապարհի առաջին քայլը, որ բաժին է ընկել այսօրվա մեր սերնդին, Արցախի խնդրի լուծումն է: Ինչ վերաբերում է ուժային կառույցների գերիշխանությանը, ասեմ հետեւյալը. դարեր շարունակ մենք ստեղծել ենք մշակութային, հոգեւոր արժեքներ ու, ցավոք, քիչ ենք մտածել դրանց պահպանության մասին: Հետեւանքն այն է, որ այսօր պետություն ենք կառուցում մեր պատմական հայրենիքի ընդամենը մեկ տասներորդ մասում: Շտապել հզոր բանակ ունենալու մասին այսօր հնարավոր չէ: Եթե ձգտում ենք խաղաղության, ապա պիտի գնահատենք մեր բանակի դերը այն պահպանելու գործում: Խաղաղություն պետք է ոչ թե խնդրել եւ ինչ-որ զիջումների գնալ, այլ՝ հակառակը: Մենք այսօր նվաճել ենք այդ խաղաղությունը մեր պայքարով, նաեւ ռազմական հաղթանակներով: Ու դրա պահպանման հիմնական գրավականն այսօր մեր բանակն է: Նախորդ իշխանությունները, ցավոք, փորձեցին ուժային կառույցների միջոցով ճնշել ժողովրդական ընդվզումը, դժգոհությունները, եւ այդպիսով կատարվեց ամենավատ բանը. մեր ուժային կառույցները հակադրվեցին ժողովրդին: Մեր պետության խնդիրը պիտի լինի վերականգնում:

– Այդ կապակցությամբ կուզենայի իմանալ ձեր կարծիքը ԵԱՀԿ առաքելության 5 թուրք դիտորդների մասին: Թեպետ մեզ պատասխանեցին, որ դա ԵԱՀԿ խնդիրն է եւ յուրաքանչյուր պետություն իր հետաքրքրվածության եւ ֆինանսական հնարավորությունների չափով է ներկայացուցիչ ուղարկում, բայց երբ մենք չունենք տվյալ Երկրի հետ դիվանագիտական հարաբերություններ, ապա կարծում եմ, մեր կողմից որոշակի դիրքորոշում պիտի ցուցաբերվի:

– Ցավոք, դա մեզանից կախված չէր: ԵԱՀԿ-ն ինքը որոշեց, թե անդամակցող կամ դրան հավակնող որ պետություններից դիտորդական առաքելությամբ կարող են հանդես գալ: Ես, իհարկե, այնքան էլ անհանգստացած չեմ:

– Բայց չի կարելի կարծել, որ ԵԱՀԿ հայտարարությունները ձեւակերպելիս, սույն դիտորդները պատսիվ դեր են ունեցել:

– Միգուցե որոշակի դեր եղել է, քանզի մենք համոզված ենք, որ խորհրդանշի սեփական հոգեւոր արժեքները: Հայրենասիրությունը տեղային չպետք է լինի: Դարաբաղում կռվող զինվորը պաշտպանում էր եւ երեւանը, եւ Արարատյան դաշտավայրը: Հիշենք ադրբեջանցիների ախորժակը: Այսօր էլ էլչիբեյը շեշտում է, որ պիտի իրականացնել մեծ Ադրբեջան ստեղծելու գաղափարը: Միավորել իրանական հյուսիսային Ատրպատականը, ներկայիս Ադրբեջանը, այնուհետեւ՝ Սեւանը, Զանգեզուրը եւ այլն: Մենք չենք կարող հետագա սերունդներին թողնել խաղաղ, հզոր պետություն, եթե գոնե այսօրվա ինչ-ինչ զրկանքների գնով չպահենք Ղարաբաղը: Հայաստանի Հանրապետությունը պիտի վարի միավորող քաղաքականություն (այդ մասին, վստահ եմ, խոսվում է Ռ. Քոչարյանի ծրագրային դրույթներում), որ բոլոր հայերը, անկախ նրանից, թե որտեղ են բնակվում, Հայաստանը համարեն իրենց հայրենիքը, եւ կարողանան այստեղ ունենալ գործ, տուն, վստահորեն ներդրումներ կատարեն՝ համոզված լինելով, որ ոչ ոք ոտնձգություններ չի կատարի իրենց ունեցվածքի վրա:

Հարցի մյուս մասի վերաբերյալ ասեմ, որ չգիտեմ ինչու, անընդհատ շեշտադրվում են երկրապահների կատարած խախտումները ու շահարկում այդ: Ցավոք մեր հասարակությունը դեռ չունի ընտրություններին նորմալ մասնակցության ավանդույթներ: Մենք դեռ սովորում ենք: Պատահական չէ այդքան դիտորդների առկայությունը: Ընտրակեղծիքի մեխանիզմը ստեղծվեց նախորդ իշխանությունների օրոք: Համոզված եմ, որ հասեմատության կարգով այս ընտրությունները կպակլիանն ավելի ապահով ու արդար էին, քան նախորդը: Միանգամից հնարավոր չի ակնկալել այն լավագույնը, որ ուզում ենք:

– Խոսքս վերաբերում է ոչ թե մեր ընտրական կուլտուրային, այլ՝ որ ընտրված նախագահն այս անգամ բիծ չունենա:

– Ես պատահաբար չխոսեցի ամեն բան համեմատության մեջ դիտարկելու մասին: Եթե նախորդ դեպքում դա վերեւից եկած հրահանգ էր, պետական կառույցները եւ ընտրական հանձնաժողովները ամբողջովին հրահանգավորված էին, ապա այս դեպքում տարբեր թեկնածուներին հարող հասարակության այս կամ այն խմբերը սեփական նախաձեռնությամբ էին օրինախախտումներ կատարում: Պետության ղեկավարը դատապարտեց այդ երեւույթները: Համոզված եմ, որ դա հենց այնպես չի արվել: Հայտարարությունը նպատակ ունի բացառել օրինախախտումների փորձերը երկրորդ փուլի ընթացքում: Փորձեր եղել են տարբեր թեկնածուների ընտրազանգվածների կողմից: Միանշանակ ամեն ինչ բարդել Ռ. Քոչարյանի վրա՝ սխալ ենք համարում: Մենք մեծաթիվ կազմակերպություն ենք, շուրջ 6 հազար անդամ ունեցող: Մեր վարչության դիրքորոշումը հստակ է եւ այդ աթիվ հրավիրել ենք տարածաշրջանների բաժանմունքների ղեկավարներին ու շեշտել, որ քարոզարշավին եւ ընտրություններին շարունակեն մասնակցել օրենքով սահմանված կարգով: Եվ դատապարտել ենք երեւույթները, որ կատարվել են երկրապահների կողմից:

– Այսինքն, երկրորդ փուլում օրինախախտումները բացառվելու են:

– Չեմ կարող ասել, ի վերջո հնարավոր չէ ամեն ինչ միանգամից կատարյալ անել: Դա եղել է իրոք ինքնագործունեություն, եւ հարվածել է մեր պաշտպանած թեկնածուի վարկանիշին: Չգիտեմ ինչու, մեր հասարակությունը համոզված է, որ ընտրությունների կազմակերպումը եւ օրինականության ապահովումը ամբողջովին իշխանությունների խնդիրն է: Հասարակությունն ինքը եւս պետք է որոշակի պարտավորություններ վերցնի:

– Ինչպե՞ս կգարգանան պրն Դեմիրճյանի հետ հարաբերությունները ձեր թեկնածուի ընտրվելու դեպքում: Մասնավորապես Վ. Սարգսյանի հայտնի հայտարարությունից հետո: Ի դեպ, Կ. Դեմիրճյանը մերժեց հեռուստաբանավեճի հրավերը:

– Կարծում եմ, որ Վ. Սարգսյանի արտահայտած տեսակետը Դեմիրճյան-Քոչարյան համագործակցության վերաբերյալ, իր անձնական կարծիքն է: Ինքս կկամենայի վարչապետի դերում տեսնել նոր մարդու, ավելի գործունյա, ավելի ժողովրդավար, մեր նոր տնտեսական համակարգին առավել համապատասխան անձնավորություն: Չնայած ես գնահատում եմ Կ. Դեմիրճյանի անձը եւ նրա մոտեցումները, բայց մի բան հարցեր կան, որ գոնե ինձ համոզում են, թե Ռ. Քոչարյանի ընտրությունը մեր պետության եւ մեր ժողովրդի հետագա ճակատագրի համար ավելի ճիշտ կլինեն:

– Իսկ ինչպե՞ս եք վերաբերվում հասարակության մեջ ձեւավորված այն կարծիքին, թե լավագույն տարբերակը կլիներ նախագահ՝ Ռ. Քոչարյան, վարչապետ՝ Կ. Դեմիրճյան, ԱԺ նախագահ՝ Վ. Մանուկյան եռանկյունին: ԱԺ-ն կդառնար բոլոր տարակարծությունների լուծման կիզակետը:

– ԱԺ-ն օրենսդիր մարմին է եւ նրա խնդիրը մեր երկրին համապատասխան օրենքների ընդունումը եւ դրանց վերահսկումն է: Չնայած վերահսկողական գործառույթներ, ցավոք, մենք այնքան էլ չունենք: Բաժանումներ այս պահին անել չեմ կարող: Վազգեն Մանուկյանը խոշոր քաղաքական գործիչ է, եւ նա էլ իր դերը պիտի ունենա այս պետության, պետական շինարարության մեջ: Բայց թե ում ինչ դերակատարում կվիճակվի՝ չեմ կարող ասել: Կարծում եմ, որ նորընտիր նախագահը անպայման պիտի հավի առնի քաղաքական կուսակցությունների հետ նորմալ հարաբերություններ ստեղծելու ուղին, եւ ոչ թե գնա նախորդների ճանապարհով: Ցանկացած քաղաքական ուժ եւ կազմակերպություն որոշակի դեր պիտի ունենա պետության կառավարման մեջ: Որովհետեւ յուրաքանչյուրի թիկունքում ժողովրդի որոշակի մասն է: Այս առումով Ռ. Քոչարյանի մոտեցումները համընկնում են մեր պատկերացումներին:

– Պրն Քոչարյանի հայտարարությունը ԱԺՄ-ի վերաբերյալ, թե այրել է կամուրջները, նշանակո՞ւմ է արդյոք, որ կուսակցությունը կմեկուսացվի, կամ գործունեությունը որեւէ կերպ կկասեցվի:

– Չեմ կարծում: Այդպիսի կասեցում Հայաստանում բացառում եմ: Ինքս դեմ կլինեմ, եթե անգամ Քոչարյանն ընտրվի նախագահ եւ որեւէ կուսակցության կասեցման հրամանագիր ստորագրի:

– Իսկ գործունեության ինչ-ինչ սահմանափակմա՞ն:

– Դա էլ չեմ կարծում, քանզի մեր տեսակետի համաձայն ցանկացած հասարակական, քաղաքական կազմակերպություն Հայաստանում լիարժեք գործելու հնարավորություն պետք է ունենա: Ինչ վերաբերում է Ռ. Քոչարյանի հայտարարությանը, ապա միգուցե որոշակի վիրավորվածության, զգացմունքների ազդեցության տակ է ասել: Բոլորս լարված ենք եւ կարիք չկա յուրաքանչյուր բառ շեշտադրելու: Պետք է ի վերջո հավի առնել այն հանգամանքը, որ Քոչարյանը կողմնակից է որոշակի կարեւորագույն խնդիրների խորհրդակցական լուծման: Նպատակ կա, որ եթե Քոչարյանը ընտրվի, կստեղծվի քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների քաղաքական խորհուրդ, որտեղ յուրաքանչյուր կողմ, հենվելով իր տեսակետների վրա, հանդես կգա որոշակի առաջարկներով:

Ցանկացած իշխանություն, եթե ունի շատ հզոր ընդդիմություն, անընդհատ մտածում է իշխանությունը պահպանելու նոր ձեւեր գտնելու մասին: Սա բացասաբար է ազդում: Բայց հակառակը՝ երբ ընդդիմությունը թույլ է, նույնպես վնասակար է եւ հող է ստեղծում, որ իշխանությունը տարվի իր ամենակարողության, անսխալականության գաղափարներով:

ԼՈՒԻԶ ԳԱԼՍՏՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Ամենային մի պաղ երեկո մենք երկար խայլում էինք Երեւանի փողոցներով եւ զրույցի թեման իր ձեռնարկած նոր գործն էր՝ «Խաչապաշտ հող» խորագրով, որին ձեռնամուխ էր եղել սիրով ու նվիրումով:

Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյակին նվիրված ծավալուն այդ աշխատությունը գեղարվեստա-վավերագրական մի ամփոփ գործ էր լինելու՝ սկսած հեթանոսական շրջանից մինչեւ մեր օրերը: Եվ ըստ նախնական մտահղացման, պիտի ընդմիջվեր-լրացվեր Հայաստան աշխարհում կացից շատերը հեռագայում դարձան նաեւ գրողի մի շարք գրքերի հերոսներ կամ նրանց նախատիպը: Ընդհանրապես Պեւրիկյանի հերոսները երկրի ցավերով եւ ուրախություններով ապրող մարդիկ են, հող հայրենին անսահման սիրող մարդիկ: «Մենք սուր վերցրեցինք խոփ պաշտպանելու համար», ասում է Հակոբը («Վիրավոր կռունկ»):

Հայրենիներով ու անուններով հռչակված Ակնի երգերն ու պատմությունները հեռվում մնացած բնօրրանի մասին անջինջ մնացին նրա հոգում՝ ըստ էության կանխորոշելով նաեւ նրա անցնելիք ճամփան՝ գրականության բնագավառում:

«Հանուն հայրենյաց թափված արյունն է, որ գին ու սեր է տալիս հայրենի հողին, եւ այդ հողն է, որ դառնում է հայրենիք», մտորում է «Եղեսիա քաղաքի եւ Միջագետք երկրի» հայոց Աբգար թագավորը («Հավատի զորությունը»): Նույնն է նաեւ Մամիկոնեից Մանվել սպարապետի պարագայում: Մահվան մահճում անգամ խիզախ ու անվեհեր հայրենյաց զինվորը պատգամում է իր Արտաշիր որդուն խաղաղության մեջ պահել երկիրը, որպես առաջին պայման հող հայրենիի բարգավաճման եւ ապա խրատում «Զանա մշտապես պայծառ պահել հայոց ճակատագրի աստղը ու եթե հարկը պահանջի, մի երկյուղիր կենացդ ապահովության համար, այլ ուրախությամբ հանձնառ մահն ազգիս ու աշխարհիս համար, քանզի հավատացած եղիր, մեր տեր Աստված քո ինքնագոհությունն անտես չի անի: Այդպես են վարվել քո քաջ նախնիք, եւ այդպես վարվիր նաեւ դու» («Վերջին խոսքերը»):

Հայրենյաց մեկ այլ զինվոր էլ Սարգիս գրիչն է («Մասյանը փրկության»), բայց ոչ զենքի, այլ գիր ու դպրության զինվոր, ոգի ամրացնող զինվոր, որ համոզված է՝ անհնար է հաղթել ոգուն: Այդ անպարտ ոգու կերտողներից մեկն էլ արցախյան ազատամարտի իր բնագավառի զինվոր ուսուցչուհի Մկրտչյանն է, լքված ու դատարկ գյուղի միակ բնակչուհին, մնացել է, որպեսզի Մռավ սարի, հայրենի Շահումյանի համար նահատակված իր աշակերտների հիրհմներին տեղադրված թիթեղներին կավիճով թարմացնի նրանց անուն-ազգանունները, մինչեւ նրանց արժանի հիրմարտեր դրվեն, որ չմոռացվեն արդեն-արդեն հողին հավատարվող հողաթմբերը: Հետո ինքն էլ կդառնա մի հուշարձան բոունցքը միտ վեր պարզած, ու ապրողներին կհիշեցնի սխրանքով ու հերոսությամբ լի այն օրերի, հող հայրենիի պաշտպան ջահել այն տղաների մասին, որոնց համար բանաստեղծի տողերն էին նաեւ պատգամ...

...Եվ ոտդ ամո՛ւր դու խփիր երկրին,

Հողիդ ու տանդ տերը դուն ե-ղի՛ր...

Երբ Արցախ աշխարհում պոռթկաց հայկյան ազատաբաղձ ոգին, երբ հայոց սահմանամերձ շրջաններում դժվար էր ու արյան կանչով ոտի ելած պետք էր տուն ու հայրենիք պաշտպանել, ինքն էլ, ահա, գրողի իր կոչմանը հավատարիմ, այս կամ այն շեն ու ավանում էր, զինվորի եւ ուսուցչի կողքին եւ «Մռավի որդիները» պատմվածքն էլ փոքրիկ մի դրվագ է արցախյան նորագույն գոյամարտից, այդ ասքի մի պատառիկ, որը վերստին է հավաստում գրողի մեծ հավատամքը՝ հող հայրենին կանգուն է այն մարդկանցով, ովքեր հավատարմությունն ապացուցում են գործով, ովքեր քանկ են գնահատում անցյալի հիշատակները:

Գիրը լեզվի հարստությունն է, իսկ մայրենին՝ ազգի: Պեւրիկյանի համար սրանք սոսկ հավուր պատ-

«Հողիդ ու տանդ տերը դու եղիր»

Խոսք հիշատակի եւ գնահատման





ռուցված եկեղեցիների ու վանքերի մասին զրույց-պատմություններով, որոնց հնուն գիտակ էր եւ թվում էր, այդ ուղղությամբ իր հմացությունն ու իրազեկությունն անսպառ է:

Շարքը սկսեց տպագրվել «Հայաստան» եւ «Հանդիպում» թերթերում եւ ոգեւորված շարունակում էր աշխատել հերթական հրապարակումների վրա, երբ կատարվեց անուղղելին...

Այդ տարի՝ 1996-ին, ամբողջացրել եւ Ամենայն հայոց կաթողիկոսին էր ներկայացրել պատմվածքների մի ժողովածու, որ լույս տեսավ նրա 60-ամյակի նախօրյակին, լույս տեսավ, երբ ինքն այլեւս ֆիզիկապես մեզ հետ չէր:

Վեհափառ հայրապետի բարձր կարգադրությամբ եւ հովանավորությամբ հրատարակված այս ժողովածուն ընդգրկում է տասնչորս պատմվածք գրված 1980-1995 թվականներին:

Պատմվածքներից յուրաքանչյուրը մեր ժողովրդի պատմության մի ժամանակահատվածին կամ իրադարձությանն է նվիրված, բայց դրանք բոլորն էլ ընդհանուր մի գաղափարով միահյուսված են իրար, մի ամբողջություն են կազմում եւ արտահայտում են մեր ժողովրդի մղած դարավոր պայքարը՝ վասն ազատ եւ ինքնիշխան հայրենիքի, վասն հպարտ լինելության:

Եփրատի ափերից գաղթած, հազար ցավ տեսած, բայց աղագայի լավ օրվա հույսը սրտում Երեւանի Արաբկիր թաղամասում նոր տունտեղ դնող մարդկանց միջավայրում էր ձեւավորվում գրողը, այն մարդկանց, որոնց հետ ճակատագիրն առավել քան դաժան էր վարվել, բայց չէր կարողացել խաթարել հավատը մարդու հանդեպ: Նրանք

Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
1997

շաճի տող ու բառ չէին, այլ ապրելու ծեւ ու սկզբունք եւ իր ապրած կյանքով նա մեզ վերստին էր ապացուցում խոսքի ու գործի միասնության կարեւորությունը: Իր գրքերի հերոսների պես ինքն էլ ողջ կյանքում սրտում եւ հոգում կրեց նախնյաց հիշատակները ու պատմություն-զրույցները Եփրատի ափերին մնացած հայրենիքի ու նրա մարդկանց մասին, իր հերոսների պես ինքն էլ իր գործի զինվորը եղավ ու թեկուզ կյանքի վերջին տարիներին «տկար էր մարմնով ու աչաց լույսն էր պակաս», ոչ մեկ օր պարապ չանցկացրեց ու շարունակ Արցախ աշխարհում էր կամ Հայոց այլ շեն ու ավանում, գրասեղանի մոտ նստելու համար թողնելով շատերիս համար ամենաանհարմար ժամերը:

«Շատ մեծ փորձություն է այս կյանքը, ասում է Պեւրիկյանի վեպերից մեկի հերոսը Տրդատ ծարտարապետը, քանզի սուզվում ու փորձվում է ամեն ինչ բարեկամություն եւ ընկերություն, երախտագիտություն ու հավատարմություն, ազնվություն ու հավատ, երդում ու խոստում: Եվ վա՜յ նրան, ով այս կյանքում չի դիմանա այդ փորձությանը: Վա՜յ նրան, ով կդրժի երդումն ու երախտամոռ կդառնա: Վա՜յ նրան, ով հանուն շահի կսեւացնի իր անունը եւ մեկին հաճոյանալու համար կդավի ընկերոջը: Քանզի ամեն ինչ անցողիկ է այս անցավոր աշխարհում եւ չկա ոչինչ մնայուն, քան թողածն ու անունը բարի»:

Հիմա ինքն այլեւս չկա, բայց կա նրա գործը, կա այս գիրքը, որ վերստին մեզ մտորել է տալիս բարի անվան ու այս աշխարհին մեր թողնելիքի մասին:

ՏԻԳՐԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՅԱՆ

ՄԵՐ ԱՐՎԵՍՏԱԳԵՏԵՐԸ

«Ազգ»-ի ցուցասրահ



Վարդան Ավետյանը ծնվել է Ջերմուկում, 1955-ին: 1985-ին ավարտել է Կուրսկի մանկավարժական ինստիտուտի գեղարվեստագրաֆիկական ֆակուլտետը: 1994-ից Հայաստանի նկարիչների միության անդամ է:

Նրա աշխատանքները գտնվում են Երեւանում, Մոսկվայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, ԱՄՆ-ում, Շվեդիայում, Շվեյցարիայում, Բելգրադում, Լիբանանում՝ մասնավոր հավաքածուներում:

Հարազատ բնաշխարհին նվիրված Ավետյանի բնապատկերները տոգորված են ջերմ քնարականությամբ: Իբրեւ արվեստագետ նա կարողանում է կտավին հաղորդել իր անմիջական ապրումները, զգացումները՝ մի հանգամանք, որ ամենակարեւորն է ստեղծագործողի համար:

Գծանկարն ամուր է, խորքից ընդգրկում է առարկան: Լուսարվեստի հմուտ օգտագործումը կենդանությամբ է օժտում նրա աշխատանքները:

Երիտասարդ արվեստագետի նախասիրությունը բնանկարն է, որ կատարում է գեղանկարչական որակով, անկեղծ եւ ջերմ:

ՖՐԱՆՍԻԱ

Դաշնամուրային համերգներ Փարիզում

Փարիզի «Յառաջ» օրաթերթը հաղորդում է, որ Մոսկվայի Ֆիլհարմոնիկի մենակատար, 1995 թվին Հռոմում առաջին մրցանակի արժանացած դաշնակահարուհի էլիզաբեթ Շահվերդյանը մարտի 13-ին «Պիանո-Պոր-Ռուայալի» շարքում համերգ է տվել Փարիզի Սենտ Մարսել եկեղեցում:

Երկու օր անց, մարտի 15-ին Փարիզի ժվեդական եկեղեցում համերգներով հանդես են եկել Հերմինե Երեցյանն ու Կարին Գեւորգյանը: Վերջինս Հայաստանում ուսանելուց հետո չորս տարի Շվեդիայում է՝ կատարելագործելու իր երաժշտական (դաշնամուր) ընդունակությունները: Ըստ «Յառաջի», Շվեդիայի «Նոր հորիզոն» պարբերականը դրվատանքով է արտահայտվել նրա տաղանդի մասին:

Հ. Օ.

ԵՐԵՎԱՆ

Ազգային գրադարանը միտքդալ միջազգային տեղեկատվական ցանցին

Հայաստանի Ազգային գրադարանում բացվեց Ինտերնետի ազատ մուտքի կենտրոնը, որով հանրապետության գլխավոր գրադարանը միացավ միջազգային տեղեկատվական ցանցին:

Կենտրոնը կազմակերպվել է ԱՄՆ-ի եւ Հայաստանի Ինտերնետի մատչելիության ընդլայնման ծրագրի միջոցով: Ծրագիրը կոորդինացվում է միջազգային հեռազոտությունների եւ փոխանակումների խորհրդի միջոցով եւ հովանավորվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների տեղեկատվական գործակալության կողմից:

ԱՄՆ-ի տեղեկատվական գործակալությունը երկրի արտաքին կապերն իրականացնող անկախ գործակալություն է այդ երկրի կառավարության գործադիր մարմինների համակարգի կազմում: Մի շարք տեղեկատվական ծրագրերի միջոցով ԱՄՆ-ի տեղեկատվական գործակալությունն աջակցում է ամերիկյան արտաքին քաղաքականության վարմանը եւ պատասխանում նրա ազգային շահերը: Կրթական եւ մշակութային ծրագրերի իրականացման միջոցով գործակալությունը նպաստում է ԱՄՆ-ի եւ այլ երկրների փոխըմբռնմանը:

ԱՄՆ-ի տեղեկատվական գործակալությունն ունի 200 ներկայացուցչություններ աշխարհի 143 երկրներում, որոնք հայտնի են որպես ԱՄՆ-ի տեղեկատվական ծառայություններ:

Սկսած 1996 թվականից ԱՄՆ-Եվրասիա Ինտերնետի մատչելիության ընդլայնման ծրագրի սահմաններում Ինտերնետի ազատ մուտքի կենտրոններ են բացվել Ռուսաստանի, Դղզստանի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Ուկրաինայի եւ Վրաստանի բուհերում եւ գրադարաններում: Ընթացիկ տարում այդ ծրագիրը իրականացվում է նաեւ Բելառուսում եւ Հայաստանում:

Ինտերնետի մատչելիության ընդլայնման ծրագրի շրջանակներում ԱՊՀ-ի երկրներում պատրաստվել են մասնագետներ դասընթացները վարելու համար: 5000-ից ավելի օգտվողներ ստացել են էլեկտրոնային անվճար հասցեներ եւ համաշխարհային լրատվական միջոցների մուտք: 200-ից ավելի ոչ կոմերցիոն կազմակերպություններ Ինտերնետ համակարգի միջոցով տեղեկատվություն են տվել իրենց գործունեության, նախագծերի, առաջարկությունների վերաբերյալ:

Ներկայումս Հայաստանում ծրագրի հիմնական խնդիրներն են՝

ա) սեմինարների կազմակերպում եւ անցկացում:

բ) Օգտվողների ուսուցումը Ինտերնետի ազատ մուտքի կենտրոններում:

գ) Ուսումնական ձեռնարկների եւ տեղեկատվական նյութերի հրատարակում եւ տարածում:

Ծրագիրն առաջին հերթին աջակցում է ԱՄՆ-ի տեղեկատվական գործակալության կողմից ֆինանսավորված հեռազոտական եւ կրթական ծրագրերի շրջանավարտներին կամ մասնակիցներին, հումանիտար եւ հասարակական գիտությունների բնագավառներում հետազոտական աշխատանքներով զբաղվող անձանց եւ կազմակերպություններին, ինչպես նաեւ ոչ կոմերցիոն կազմակերպությունների ներկայացուցիչներին: Նշանակալի իրադարձության՝ Հայաստանի ազգային գրադարանում Ինտերնետի ազատ մուտքի կենտրոնի բացման առթիվ ելույթ ունեցան եւ երեւույթի մեծ կարեւորությունը շեշտեցին Ազգային գրադարանի տնօրեն Գեւորգ Տեր-Վարդանյանը, Երեւանի ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն, ֆիզմաթ գիտությունների դոկտոր Ուրբեն Մկրտչյանը, ակադեմիկոս, Մատենադարանի տնօրեն Սեն Արեւշատյանը, միջազգային հետազոտությունների եւ փոխանակումների տնօրեն Զառա Հովհաննիսյանը, ԱՄՆ-ի տեղեկատվական գործակալության ղեկավար Մորգան Լիդիկը, ԱՄՆ-Հայաստան Ինտերնետի մատչելիության ընդլայնման ծրագրի տեխնիկական կոորդինատոր Դավիդ Տոլոիանը եւ ուրիշներ:

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ԵՐԵՎԱՆ

«Միասնության» հաղթանակը

Երեկ «Գրանդ-տոբակո» հայ-կանադական համատեղ ձեռնարկության մարզադահլիճում անցկացվեց բասկետբոլի մրցախաղ «Միասնություն» եւ «Աղագա» թիմերի միջեւ, որը կազմակերպել էր ՀՀ բասկետբոլի ֆեդերացիայի նախագահ, «Գրանդ-տոբակո» ձեռնարկության տնօրեն Հրանտ Վարդանյանը:

«Միասնություն» թիմը հանդես եկավ հետեւյալ կազմով՝ ՀՀ նախագահի թեկնածու Ռոբերտ Քոչարյան, ԱԳՆ նախարարի պաշտոնակատար Վարդան Օսկանյան, ՆԳ եւ ԱԱ նախարար Սերժ Սարգսյան, ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի փոխնախարար Իշխան Զաքարյան, ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյան, Ամերիկայի հայկական համագումարի ներկայացուցիչ Վաչինգտոնից Թիմ Ջեմալ, ԱԳՆ աշխատակից Վլադիմիր Կարապետյան, Ռոբերտ Քոչարյանի որդի Սեդրակ Քոչարյան, Մելիք Սանթրոսյան, Սամվել Արսենյան, բժիշկ Լեոնիդ Զախարյան եւ Վարդան Օսկանյանի որդի Արմեն Օսկանյան:

«Աղագա» թիմում ընդգրկված են միայն 18-24 տարեկան պատանիներ, որոնք տարբեր բուհերի ուսանողներ են: Խաղը վարում էին ազգային կարգի մրցավարներ Աբրահամ Ջենչրյանը եւ Արա Արմենակյանը:

Ի տարբերություն «Աղագա» թիմի, «Միասնությունը» ֆիզիկապես լավ վիճակում էր գտնվում: Դասալը առաջին րոպեներին հաստատ բացելու լավ հնարավորություն ստացավ Ռոբերտ Քոչարյանը, որն էլ իր խառնվածքին համապատասխան, այս անգամ էլ փորձեց չկորցնել առիթը եւ բացեց խաղի հաշիվը, սակայն ակտիվ խաղով, դիպուկ նետումներով, հաշվենկատ փոխանցումներով առավել աչքի էր ընկնում Վարդան Օսկանյանը: Սերժ Սարգսյանը հնարավորին ուժ եւ եռանդ էր գործադրում, մշտապես վազքի մեջ էր, բայց նետումներն անարդյունավետ էին, ինչը չի կարելի ասել հանցագործների ծերբակալության մեջ գործադրած իր ջանքերի: Արկադի Ղուկասյանը, կարելի է ասել, ֆիզիկապես պատրաստ վիճակում էր եւ երեւի թե ԼՂՀ-ի պատիվը բարձր պահելու համար մեծ ճիգեր էր գործադրում: Առաջին խաղակեսի արդյունավետ խաղացողը (ինչպես պետք էր ենթադրել) Ռոբերտ Քոչարյանն էր, որը թիմին բերեց 7 միավոր, Արկադի Ղուկասյանը՝ 6, Վարդան Օսկանյանը՝ 5, Իսկ Սերժ Սարգսյանը՝ ոչ մի միավոր չկարողացավ վաստակել: Առաջին խաղակեսն ավարտվեց 40-15 հաշվով հօգուտ «Միասնություն» թիմի: Ընդմիջման ժամանակ Ռոբերտ Քոչարյանը ասաց, որ ամենօրյա զբաղվածության պատճառով, շաբաթական երկու օր երկուական ժամ է կարողանում հատկացնել մարզումներին եւ խոստովանեց, որ բասկետբոլով երբեք չի զբաղվել: Իրատես լինելու համար նկատենք, որ Ռոբերտ Քոչարյանը անբուլչ խաղի ընթացքում, հատկապես առաջին խաղակեսին, մի փիչ հուզված էր, թեպետ չխոստովանեց, բայց համարվեց թիմի օգտավետ խաղացողը եւ երկրորդ խաղակեսում բերեց 9-ը միավոր, իսկ Վարդան Օսկանյանն ու Արկադի Ղուկասյանը առավել աչքի ընկնողներից էին: Այսպիսով խաղն ավարտվեց 77-38 հաշվով, հօգուտ «Միասնություն» թիմի: Երկու թիմերի լավագույն խաղացողներին, «Միասնություն»-ից Ռոբերտ Քոչարյանին, «Աղագա»-ից Ղուկաս Ուլիխանյանին հանձնվեցին բյուրեղապակյա գավաթ հուշամրցանակ «Գրանդ-տոբակոյի» գլխավոր տնօրեն Հրանտ Վարդանյանի եւ ֆեդերացիայի գործադիր տնօրեն Ալիկ Նավասարդյանի կողմից:



Վերջում պրն Քոչարյանը իր տպավորությունները արտահայտելով խաղից նշեց, որ հաղթեց բարեկամությունը: Նա բարձր տրամադրության մեջ էր եւ արդեն իսկ պայմանավորվածություն էր ձեռք բերվել ընտրություններից հետո մրցախաղ-ռեւանշ անցկացնելու: Այնուհետեւ պատասխանեց լրագրողների հարցերին:

- Ի՞նչ է նշանակում «Միասնություն» անվանումը:

- Թիմում կայինխաղացողներ ԼՂՀ-ից, սփյուռքից եւ Հայաստանից: Դրանով էր պայմանավորված անվանումը:

- Թիմը լավ խաղավիճակում է: Նույնը կարելի՞ է ասել երկրորդ փուլի մասին:

- Երկրորդ փուլ մտնելու ենք ավելի կազմակերպված: Մենք փորձ չունեինք, բայց ընդդիմությունն ավելի վարժված էր:

- Ընտրությունների «երկրորդ խաղակեսն» ինչպե՞ս կավարտվի:

- Ես վախենում եմ մի բան ասել, որովհետեւ միանգամից այլ հայտարարություններ կարող են լինել:

- Նախագահ ընտրվելու դեպքում պատրաստվո՞ւմ եք նման խաղ անցկացնել ընդդիմության հետ:

- Ընդդիմություն գրեթե չի մնացել, բոլորս միասնական ենք եւ մի թիմում ենք: Իսկ այն մասը, որ ընդդիմություն է, չեմ կարծում, թե սպորտին մոտ մարդիկ են:

- Բասկետբոլի դաշտո՞ւմ էր դժվար, թե՞ ընտրատարածքի մրցագորգի վրա:

- Ամեն տեղ էլ դժվար է, ուղղակի հաճույք պետք է ստանալ:

- Ինչպե՞ս եք տանում պարտությունը:

- Հետաքրքիր, բայց սովորաբար չեմ պարտվում:

- Կյանքո՞ւմ էլ:

- Այո:

Վերջում ԱԳՆ փոխնախարար Վարդան Օսկանյանի հետ ունեցած կարճատեւ զրույցի ընթացքում տեղեկացանք, որ վարչապետի շնորհիվ արդեն երեք ամիս է, ինչ պարապմունքներ է անցկացնում: Ի դեպ, պրն Օսկանյանը մարզաձեւերից նախընտրում է բասկետբոլը եւ թենիսը: Եվ հերքեց ասեկոսեները, հավաստելով, որ ուրից երբեք չի բողոքել եւ գտնվում է առողջական լավ վիճակում:

ԱԲԱԲՍ ՍԱՖԱՐՅԱՆ

ԹԵՆԻՍ

Կիսաեզրափակիչի մասնակիցները հայտնի են

Կի Բիսքեյնի խոշոր մրցաշարը մոտեցել է ավարտին:

Կանանց մրցաշարում որոշվել են կիսաեզրափակիչ փուլի բոլոր մասնակիցները: Աշխարհի թիվ 1 ռակետ, շվեյցարուհի Մարտինա Հինգիսի հաղթանակի մասին մենք արդեն գրել ենք: Նրան միացան ամերիկուհի Վենուս Վիլյամսը, որը բավականին հեշտությամբ 6-1, 6-2 հաշվով հաղթեց Սիլվիա Ֆարինային (Իտալիա): Զարմանալիորեն պայքար չստացվեց նաեւ հաջորդ հանդիպման ժամանակ. Արանչա Սանչես-Վիկարիոն (Իսպանիա) 6-1, 6-1 հաշվով պարտության մատնեց աշխարհի ուժեղագույնների ռեյտինգ-ցուցակի երրորդ թենիսիստուհի Յանա Նովոտնային (Չեխիա): Այժմ կիսաեզրափակիչ խաղում Սանչես-Վիկարիոն հանդիպելու է ռուսաստանցի Աննա Կուռնիկովայի հետ: Վերջինս շարունակում է հաղթարշավը: Քառորդ եզրափակիչում նա «զոհերի» թիվը համալրեց աշխարհի 2-րդ թենիսիստուհի, օլիմպիական չեմպիոնուհի Լինդսեյ Դեւենպորտը (ԱՄՆ): Կուռնիկովան իր փորձառու մրցակցուհուն հաղթեց 6-4, 2-6, 6-2 հաշվով:

Աննա Կուռնիկովա

Նախորդ համարում գրել էինք, որ երկու մասնակիցներ՝ Մարսելո Ռիոսը (Չիլի) եւ Գրեգ Ռուսեդսկին (Անգլիա), մրցաշարում հաղթելու դեպքում կարող են աշխարհի ուժեղագույն թենիսիստների ցուցակում առաջին տեղում հայտնվել, քանի որ թիվ 1 ռակետ Փիթ Սամփրասը (ԱՄՆ) դուրս է մնացել հետագա պայքարից: Սակայն պարտություն կրեց նաեւ Ռուսեդսկին: Նա 2-6, 2-6 հաշվով զիջեց շվեդ Թոմաս Էնկվիստին: Վաստահ առաջ է շարժվում Ռիոսը: Երիտասարդ չիլիացին, որ վերջերս հաղթեց Ինդիան Ուելսի մրցաշարում, այստեղ եւս հաջողության հույսեր ունի (հերթական խաղում նա հաղթեց Էնկվիստին): Տղամարդկանց մրցաշարում պայքարը շարունակողների թվում են նաեւ Անդրե Աղասին (ԱՄՆ), որը պարտության է մատնել իսպանացի Ալբերտո Կոստային, եւ անգլիացի Թիմ Հենմանը, որը հաղթել է Գուստավո Կուերտենին (Բրազիլիա):

ՖՈՒՏԲՈԼ

Միեւնույն օրը 13 հանդիպում

Հոկտեմբերի օրը ֆուտբոլային մեծ օր էր Եվրոպայում: Աշխարհամասի 13 քաղաքներում անցկացվեցին ընկերական ստուգողական հանդիպումներ, որոնցում հանդես եկած հավաքականների մեծ մասը հունիս-հուլիս ամիսներին կմասնակցի Ֆրանսիայում կայանալիք աշխարհի առաջնության եզրափակիչ մրցաշարին:

Մեծ հետաքրքրություն էր առաջացրել Շտուտգարտում անցկացված Գերմանիա-Բրազիլիա խաղը: Եվ սպասելիքներն արդարացան:

Խաղն ընթանում էր փոփոխական հնարավորություններով: Սակայն 27-րդ րոպեին աջ եզրից Ռոբերտո Կառլոսի կատարած անկյունայինից հետո Սեզար Սամպայոն գլխի շեշտակի հարվածով գնդակն ուղարկեց գերմանացիների դարպասը: Դաշտի տերերի դարպասապահ Անդրեաս Քյոպկեն չհասցրեց նույնիսկ տեղից շարժվել. 0-1: 8 րոպե անց կոպիտ խաղի համար մրցավարը դաշտից հեռացրեց գերմանացի Յուրգեն Քոհլերին: Սակայն թվային գերակշռությունը ոչինչ չտվեց աշխարհի չեմպիոններին, իսկ երբ երկրորդ խաղակեսի սկզբին երկրորդ զգուշացումից հետո խաղադաշտը թողեց նաեւ բրազիլացիների ավագ Դունգան, գերմանացի ֆուտբոլիստները կրկին ակտիվացան: Ավելին՝ շուտով, 65-րդ րոպեին նրանց հավաքականի ավագ Յուրգեն Կլինսմանին փոխարինած Ուլֆ Կիրստենը մոտ տարածությունից խփեց պատասխան գոլը՝ 1-1: Թվում էր, թե այս հետաքրքիր խաղն այդպես էլ ոչ-ոքի կավարտվի, սակայն խաղավարից 2 րոպե առաջ Ռոնալդոն, որը մինչ այդ իրեն ոչ մի բանով չէր դրսեւորել, խորքից երկար փոխանցում ստացավ, անցավ պաշտպանների կողքով եւ, նաեւ խաբս տալով դարպասապահին, հաշիվը դարձրեց 2-1: Արանով ընդհատվեց Գերմանիայի հավաքականի՝ առանց պարտության անցկացրած 22 հանդիպումների շարքը:

Հետաքրքիր էր նաեւ Մոսկվայի «Դինամոյում» անցկացված խաղը: Աշխարհի առաջնության անհաջողակ Ռուսաստանի թիմն ընդունել էր առաջնությունն իրենց մոտ հյուրընկալողներին՝ ֆրանսիացիներին: Երկու հավաքականներն էլ ներկայացել էին ոչ ուժեղագույն կազմերով, սակայն հաստատես զգաստ էր հուտերի թիմի խաղացող Զինեդին Զիդանի բացակայությունը: Ֆրանսիացիներն իրենց հնարավորություններից բավականին ցածր հանդես եկան: Նրանք փաստորեն ոչ մի իրական գոլային պահ չստեղծեցին Ռուսաստանի թիմի դարպասին, իսկ պաշտպանությունում մի շարք սխալներ թույլ տվեցին: Արդեն 3-րդ րոպեին, օգտվելով դարպասապահ Լեոնիդ Լեշիգիի անփութությունից, դաշտի տերերի հարձակվող Սերգեյ Յուրանը գնդակն ուղարկեց Ֆրանսիայի հավաքականի դարպասը: Այս գոլը միակը եկավ խաղում, թեեւ նոր հաջողության հնարավորություն ունեցան նաեւ Յուրանը, նրա թիմակից Ալեխեյ Գերասիմենկոն: Ռուսները հաճույքով փաստեցին, որ Ֆրանսիայի հավաքականի հետ 14 հանդիպումներից 5-ն ավարտվել է իրենց հաղթանակով, 6-ը՝ ոչ-ոքի, եւ միայն 3-ում են առավելության հասել ֆրանսիացիները, իսկ խփած եւ բաց թողած գնդակներն են 20-16: Այո, Ֆրանսիայի թիմը հուսախաբ արեց, սակայն պետք է կարծել, որ մնացած երկուսուկես ամսվա ընթացքում նա զգալիորեն կուժեղացնի իր խաղը:

Այս խաղը մեզ համար հետաքրքիր էր նաեւ նրանով, որ Ռուսաստանի եւ Ֆրանսիայի հավաքականներն ընդգրկված են Եվրոպայի առաջնության նախնական IV խմբում, այսինքն, հանդես կգան Հայաստանի հավաքականի հետ:

Իր դաշտում հիանալի խաղ ցույց տվեց Իսպանիայի հավաքականը: Հան-

դիպումն սկսվելուց մի փոքր անց հաշիվն արդեն 2-0 էր: Իսպանիայի թիմի նորեկ, Մադրիդի «Ռեալի» 20-ամյա խաղացող Ֆեռնանդո Ֆոյենտեսը 1-ին եւ 5-րդ րոպեներին 2 գոլ խփեց Շվեդիայի հավաքականի դարպասը: Իսկ փոքրաքանակ Ռաուլը (30-րդ րոպեին) եւ էլեվերիան (70-րդ րոպեին), եւս 2 անգամ գրավելով հյուրերի դարպասը, վերջնական հաշիվը 4-0 դարձրին:

Մնացած 10 հանդիպումներում գրանցվեցին եւ օրինաչափ, եւ անսպասելի արդյունքներ: Չենք մեկնաբանի դրանք: Միայն կրկին նշենք, որ բոլոր խաղերը, հատկապես աշխարհի առաջնության մասնակիցների համար, չափազանց օգտակար եղան, ցույց տվեցին, թե ինչի վրա նրանք պետք է աշխատեն մնացած ժամանակում:

Շոտլանդիա-Դանիա՝ 0-1, Շվեյցարիա-Անգլիա՝ 1-1, Բելգիա-Նորվեգիա՝ 2-2, Ավստրիա-Հունգարիա՝ 2-3, Ուելս-Ճամայկա՝ 0-0, Մակեդոնիա-Բուլղարիա՝ 1-0, Չեխիա-Իռլանդիա՝ 2-1, Հյուսիսային Իռլանդիա-Սլովակիա՝ 1-0, Լեհաստան-Սլովենիա՝ 2-0, Մալթա-Ֆինլանդիա՝ 0-2:

Չորրորդ փուլից հետո

Պորտուգալիայում անցկացվեցին ավտոռալլի աշխարհի առաջնության չորրորդ փուլի մրցումները: Փուլը բաղկացած էր 9 հատուկ մրցաստարածություններից:

Շաս հաջող հանդես եկավ շոտլանդացի Կոլին Մակրեյնը, որը մրցում էր «Սուբարու» մակնիշի ավտոմեքենայով: Նա հաղթեց մի քանի մրցաստարածություններում՝ հավաքելով բավականին միավորներ: Պորտուգալիայում աչքի ընկան նաեւ ֆինն Յուհա Կանկոնենը («Ֆորդ»), իսպանացի Կառլոս Սայնսը («Տոյոտա»): Անհավասար հանդես եկավ աշխարհի ներկայիս չեմպիոն, ֆինն Տոնի Մյակինենը:

Պորտուգալական փուլից հետո ընդհանուր հաշվարկում առաջատար է Սայնսը, որը 22 միավոր է հավաքել: Չորրորդ փուլի հերոս Մակրեյնը չորրորդն է: Նա 14 միավոր ունի:

ՀԵՅԱՍԼՎԱՅԻՆ ՍՊՈՐՏ

Առաջատարը Միխայել Բուդիեն է

Իսպանիայում անցկացվող «Կաստիլոնյան գարուն» անվանումով բազմօրյա հեծանվավազքի երրորդ փուլի հաղթող դարձավ հոլանդացի Միխայել Բուդիեն: Երբ մրցաստարածության ավարտին մոտավորապես 1 կմ էր մնացել, նա կտրուկ պոկումով աջ անցավ մրցակիցներից եւ միանձնյա հասնելով վերջնագիծը: Նրանից 12 վայրկյանով հետ մնաց ֆրանսիացի Լորան Ժելաբերը:

Այժմ, երեք փուլից հետո Միխայել Բուդիեն ընդհանուր հաշվարկում վստահորեն գլխավորում է հեծանվավազքը:

digitised by A.R.A.R.@

օրվա հետքով

ՈՐԻՍԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Կարեն Դեմիրճյանը «լճացման տարիների գավառական կուսակցական գործի՞չ»

«Նեզավիսիմայա գազետա» օրաթերթի «Համագործակցություն» հավելվածում պրոֆ. Անդրանիկ Միհրանյանը դիտարկում է Կարեն Դեմիրճյանի վերադարձը քաղաքականության ասպարեզ:

25 ՄԱՐՏ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: «Դեմիրճյանի հաջողությունը եւ այդ գործչի հանդեպ ինչպես հայկական ընտրազանգվածի, այնպես էլ մոսկովյան քաղաքական շրջանների ունեցած մեծ ուշադրությունը բացատրություն են պահանջում, գրում է քաղաքագետը, բրեժնեւյան լճացման տարիների հայկական կոմկուսի անփոփոխ ղեկավարը պատահական չէ, որ դարձավ Հայաստանի նախագահի ընտրությունների գլխավոր անակնկալը»: Միհրանյանը «մակերեսային մեկնաբաններ եւ վերլուծաբաններ» է որակում նրանց, ովքեր մեխանիկորեն զուգահեռներ են անցկացնում Դեմիրճյանի եւ Հայաստանի հարեւան հանրապետություններում համայնավարական նախկին առաջնորդների՝ Ալիեւի եւ Շեւարդնաձեի իշխանությանը վերադառնալու միջեւ: «Դրանից ելնելով, շատերը շտապեցին գուշակել Դեմիրճյանի հաղթանակն այս ընտրություններում», գրանցում է հոդվածագիրը: Միհրանյանի հակափաստարկման հիմքի մասին պատկերացում է տալիս հետեւյալ ծավալուն մեջբերումը. «Վերջին 10 տարում քաղաքական զարգացումը Հայաստանում արմատապես տարբերվում էր հարեւան անդրկովկասյան հանրապետություններում տեղի ունեցածից: Դեմիրճյանի քաղաքական վարքագիծը նաեւ շատերվում էր նրա գործընկերների վարքագծից: Ի տարբերություն հարեւան հանրապետությունների, ազգային ժողովրդավարական դարաբաղյան շարժմանը եւ նրա առաջնորդներին հաջողվեց ոչ միայն զրկել իշխանությունից համայնավարական կուսակցությանը, այլեւ կառուցել կոնսոլիդացված իշխանությամբ բնորոշվող եւ հզոր ուժային կառույցներ ունեցող ամուր պետականություն: Ընդսմին, վերջին մեկուկես հազարամյակի ընթացքում առաջին անգամ հայկական հենց այս իշխանություններին է հաջողվել գոնե «դե ֆակտո» ընդարձակել Հայաստանի սահմանները: Հենց դա է պատճառը, որ եւ 1991-ի, եւ 1996-ի նախագահական ընտրություններում հանրապետության բարձրագույն պաշտոնի համար պայքարը ծավալվում էր, ի տարբերություն նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետությունների, ոչ թե ժողովրդավարների եւ բարձրագույն նոմենկլատուրայի նախկին, այլ ազգային ժողովրդավարական շարժման ալիքի վրա քաղաքականության ասպարեզ թեւակոխած նոր, երիտասարդ սերնդի ներկայացուցիչների միջեւ»: Ահա այս իրողություններն էին, որ Անդրանիկ Միհրանյանի համաձայն, վերածեցին հայ համայնավարներին երկրորդական մի կուսակցության: Նրանց նախկին ղեկավար Կարեն Դեմիրճյանն էլ լիովին դուրս մնաց հայության քաղաքական կյանքից եւ Երեւանի խոշորագույն գործարաններից մեկի տնօրենի պաշտոնում պայքարում էր այդ ծեռնարկության կենդանի մնալու համար: Ըստ հայտնի քաղաքագետի, եթե Վրաստանում եւ Ադրբեջանում նախկին նոմենկլատուրայինների վերադարձի նախօրեին քառս էր տիրում եւ Ալիեւն ու Շեւարդնաձեն կոչված էին վերջ տալու դրան եւ կարգ ու կանոն հաստատելու, ապա մեր օրերի Հայաստանը ունենալով կոնսոլիդացված իշխանություն եւ ամուր պետականություն, փրկչի դերում հանդես եկող հին առաջնորդի կարիք չի զգում: Բացի այդ, Միհրանյանի տեսադրմամբ, անգամ լճացման տարիներին Կարեն Դեմիրճյանն ուներ գավառական եւ նախաձեռնությունից զուրկ քաղաքական գործչի նկարագիր: Արդյունքն էլ այն էր, որ ԽՍՀՄ շրջանակներում ունեցած քաղաքական ազդեցության եւ աճի առումով Դեմիրճյանը խիստ ետ ընկավ իր գործընկերներից՝ Ալիեւից եւ Շեւարդնաձեից: Քաղաքականությունից դուրս անցկացրած վերջին 10 տարիների ժամանակահատվածը, Միհրանյանի համոզմամբ, միանգամայն անընդունակ է դարձրել Կարեն Դեմիրճյանին համարժեք կերպով ընկալելու այն ամենն, ինչ տեղի է ունենում այսօրվա աշխարհում: Նա սիրված է լինելու ղեկավարել մի անկախ հանրապետություն աշխարհում առկա իրողությունների լույսի ներքո, այլ ոչ թե կոմկուսի կենտկոմի հրահանգիչների ցուցումների հիման վրա: Ընտրությունների երկրորդ փուլ Դեմիրճյանի անցնելը ռուսաստանցի հայազգի քաղաքագետը բացատրում է բրեժնեւյան լճացման տարիների համեմատական բարորության կարոտաբաղձությամբ: «Առաջին փուլում Դեմիրճյանի օգտին քվեարկելը բացառապես իռացիոնալ բնույթ էր կրում: Պատահական չէ, որ այս թեկնածուն չունի ոչ գաղափարախոսություն, ոչ էլ Հայաստանը ճգնաժամից հանելու ծրագիր», գրում է Անդրանիկ Միհրանյանը: Ըստ նրա, լճացման շրջանի գավառական կուսակցական գործիչ Կարեն Դեմիրճյանը չէ, նույնիսկ ինքը Աստված ի զորու չէ վերականգնելու այն ամենը, ինչ եղել է նախկինում եւ ինչից հայաստանցիները զրկվել են:

ԱՆԳԼԻԱ

Հայ գիտնականը կ'արժանանայ Դարվինի ստացած մրցանակին

Երկար տարիներ ի վեր հսկայ գիտական վաստակ շահած հայ ակադեմական մը ապրիլ 16ին Անգլիոյ Քիիլ քաղաքին մէջ մեծ պատիւի մը պիտի արժանանայ: Այդ օրը Անգլիոյ հնաւանդ երկրաբանական ընկերութիւնը պրոֆ. Քարլ Թուրեկեանին պիտի ընծայէ «Ուոլաստոն» մրցանակը: Սա մրցանակ մըն է, որ կը տրուի գիտութեան այս մարզին մէջ եզակի նուաճումներ արձանագրած ամէնէն կարկառուն դէմքերուն, որոնց առաջիններէն եղած է աշխարհահռչակ անգլիացի գիտնական Դարվինը:

Ուոլաստոնն ինքը եղած է գիտարար մը երկրաբանական տարրերու պրպտումին եւ ստուգման բնագաւառին մէջ:

Պրոֆ. Թուրեկեան ականաւոր ամերիկական էյլ համալսարանի դասախօսներէն է եւ կը վարէ այդ համալսարանի Բենջամին Սիլլիման երկրաբանութեան-ֆիզիագիտութիւն ամբիոնը: Իր մասնագիտութեան է քարերու եւ ժայռերու ֆիզիական տարբաղադրութիւնները եւ անոնց բնախօսական էութիւնը: Հրատարակած է բազմաթիւ հատորներ, որոնք զինք ըրած են ժամանակակից վիթխարի դէմք մը այս մարզին մէջ: Անցեալ տարի, աշխարհի ամէն կողմը ցրուած իր նախկին աշակերտները իր 70 ամեակը տօնեցին կազմակերպելով սիմպոզիում մը:

Այս նպատակաւ էյլ համալսարանը փութացած էին Ճապոնի, Չինաստանի, Եւրոպայի եւ Ամերիկայի առաջնակարգ 36 մասնագէտներ: «Վերջին խօսքը» տրուած էր խարբերդցի ծնողներէ սերած հայ գիտնականին, որ ամենայն համեստութեամբ անդրադարձաւ իր նախկին աշակերտներուն ներկայացուցած թեզերուն եւ անոնց արժէքը վեր հանելով զանոնք վերագրեց իր նախկին աշակերտներուն բացառիկ ուշիմութեան: Արձարձուած նիւթերը կ'ընդգրկէին ծովային, անջրպետային, օվկիանոսային, ջրաբանական եւ մթնոլորտային հարցեր: Այդ օրը, ինչպէս եւ յառաջիկայ ապրիլ 16ը, հայութեան համար պիտի մնան պարծանքի բացառիկ առիթներ:

ԹՂԹԱԿԻՑ

Ընտրախախտումները՝ անկազմակերպության հետեւանք

ԵՐԵՎԱՆ, 26 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ֆրանսիայի աշխարհաքաղաքական հետազոտությունների կենտրոնի անդամ էմանուել Գուլոն, որը որպես դիտորդ մասնակցել է ՀՀ նախագահական ընտրությունների առաջին փուլին, Փարիզ վերադառնալուց հետո ասել է, թե հանձին Հայաստանի, ինքը հայտնաբերել է սիրալիր մարդկանցով հիասքանչ մի երկիր, որն ունի սոցիալական, տնտեսական եւ քաղաքական մեծ ուժականություն, մի երկիր, որը մեծ հույսեր է կապում նախագահական ներկայիս ընտրությունների հետ:

Ինչ վերաբերում է այդ ընտրություններին եւ դրանց ընթացքում տեղի ունեցած անկանոնություններին, ապա էմանուել Գուլոն այդպիսի անկանոնություններ չի հաստատել անձամբ: Իսկ ինչ որ եղել է, «Ազատություն» ռադիոկայանի թղթակցի հետ ունեցած հեռախոսազրույցում նա անվանել է ավելի շուտ անկազմակերպվածություն եւ փորձառության պակաս: Դիտավորյա՞լ է եղել, թե՞ ոչ՝ չեմ կարող ասել, նշել է նա:

Դիտորդն ասել է, թե իրեն ցնցել է այն հանգամանքը, որ քվեատուփերը եղել են փայտից, այլ ոչ թե այնպիսի թափանցիկ նյութից, ինչպիսիք որ լինում են այստեղ՝ Ֆրանսիայում, ինչպես նաեւ այն, որ քվեատուփերի պաշտոնական կնիքները, փականները դրված են եղել շատ անհաջող ձեւով:

Ըստ դիտորդի, ընտրությունները Հայաստանում ընթացել են ընդհանուր առմամբ դեմոկրատական չափանիշների համաձայն, եթե նույնիսկ եղել են խարդախության առանձին փորձեր, ապա մասսայական կեղծիք տեղի չի ունեցել:

ԱՇԽԱՏԱՆՔԻ Է ՀՐԱՎԻՐՈՒՄ

գրելու ձիրք ունեցող ուշիմ եւ համարձակ երիտասարդների:

ԿՅԱՆՔԻ ՊՏՈՒՄՆԵՐ 47

THE EURASIA FOUNDATION

Is pleased to announce Gind Printing House as the winner of the competition to establish a commercially-based independent newspaper press in Armenia.
The Foundation wishes to congratulate Gind and to thank all applicants for their participation.
The newspaper press project is funded by U. S. Agency for International Development and is scheduled to begin in summer 1998.

«ԵՎՐԱՍԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ամփոփելով Հայաստանում թերթերի կոմերցիոն տպարանի հիմնման բաց մրցույթի արդյունքները, Հիմնադրամը հայտարարում է, որ մրցույթի հաղթող է ճանաչվել ԳԻՆԴ տպարանը:
Հիմնադրամը շնորհավորում է հաղթողին եւ շնորհակալություն հայտնում մրցույթի բոլոր մասնակիցներին ակտիվ մասնակցության համար:
Վերոհիշյալ ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության կողմից:
Ծրագրի իրականացումը նախատեսվում է սկսել 1998 թ.-ի ամռանը:

ՎԱՃԱՌՎՈՒՄ է առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգաստանի ծառերով փոքրիկ այգի:
Զանգահարել 27 22 57 ժամը 10-16, 58 33 26 ժամը՝ 18-23

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
4 սենյականոց բնակարան (Դավիթաշեն, II թաղամաս, 3-րդ շենք, բն. 4):
Զանգահարել 72-89-83

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
մեկ սենյականոց բն. Նորքի IV զանգվածում, հեռ. 64-88-85, 64-93-89:

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
2 սենյականոց բնակարան, Ֆրունզեի փ. շենք 6, 34 բն., 5 հարկանի շենքի 5-րդ հարկում:
Հեռ.՝ 44-97-40, 58-18-41
(«Հայրենիք» կինոթատրոնի մոտ):

ՏՐՎՈՒՄ է ՎԱՐՁՈՎ
2 սենյականոց բնակարան, նկուղով, քաղաքի կենտրոնում:
Զանգահարել՝ 23-56-78

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
4 սենյականոց բնակարան 115/70 մ, Չարենցի 52, 3 հարկանի քարե շենքի 2-րդ հարկում:
Հեռ.՝ 55-66-56

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
36x7,5x15 մ չափսերով երկաթե քանդվող անգար, որը կարելի է օգտագործել որպես պահեստ, արտադրամաս, ինչպես նաեւ այլ նպատակներով: Անգարը տեղադրված է երեքունու շրջանի Ջրաշեն գյուղում: Գինը՝ 2000 դոլար:
Հեռախոս՝ 23-41-03, 57-42-46

Քաշի նվազեցման նոր ծրագիր
Մեկ ամսում 5-15 կիլոգրամ

Զանգահարել 58-36-49, 8(21) 40-70-78 (բջջ.)

Robin Generators RGX3500

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
բենզինով աշխատող միաֆազ էլեկտրագեներատորներ: ☎ 529353

հաճախակ.	մախս. հզ.	նոմ. հզ.	աշխ. ժամ	տարող.
50 Հց	3.0 Կվտ	2.5 Կվտ	7.1 ժ	13 լ
60 Հց	3.5 Կվտ	3.0 Կվտ	6.1 ժ	



«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունեաց 2 Գրանցման թիւ 65. Դասիչ 69149. Պատուէր 790 Տպաքանակը՝ 3500 Ստորագրուած է տպագրության՝ 26. 03. 1998 Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@